«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնները (այսուհետ նաև՝ «Կանոններ») սահմանում են «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների մատուցման կարգը, այդ ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդի հետ տեղեկատվության փոխանակման և փաստաթղթաշրջանառության, ինչպես նաև նշված ծառայությունների հետ կապված գրանցումների վարման կարգը և հանդիսանում են Ընկերության և Հաճախորդի միջև կնքվող Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրի բաղկացուցիչ մասը:

1.2. Սույն Կանոններում օգտագործվող հասկացությունները և սահմանումները ունեն Կանոնների 2-րդ գլխում սահմանված նշանակությունները: Եթե տվյալ հասկացությունները Կանոնների 2-րդ գլխում սահմանված չեն, ապա դրանք տրվում են ՀՀ օրենսդրությամբ և/կամ միջազգային գործարար սովորույթներով ընդունված նշանակություններով, եթե համատեքստից ակնհայտորեն այլ բան չի բխում:

2. Հասկացություններ և սահմանումներ

2.1. Սույն Կանոններով սահմանված հասկացությունները և սահմանումները ունեն հետևյալ նշանակությունները.

ՓԼԴՊ	Փողերի լվացման դեմ պայքար
ՓԼԱՖ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար
Դիմում	Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող՝ Պայմանագրի պայմաններին և դրույթներին համաձայնությունը հաստատող դիմում, որը ներկայացվում է Ընկերության կողմից հաստատված ձևաչափով՝ Կանոնների Հավելված 1-ում սահմանված կարգով:
Ակտիվներ	Դրամական միջոցներ և Արժեթղթեր
Իմաստալից հենանիշ	Ֆինանսական շուկաներում (օրինակ՝ բորսայում կամ այլ ինդեքսում) լայնորեն ընդունված և կիրառվող ցուցանիշ, որը սույն Կանոններով և Պորտֆելի կառավարման շրջանակներում կազմվող ներդրումային հայտարարագրով սահմանված կարգով օգտագործվում է Պորտֆելի կառավարման արդյունավետությունը գնահատելու համար:
Չերաշխավորված տեղաբաշխում	Տեղաբաշխման այն տեսակն է, որի դեպքում Ընկերությունը ձեռնարկում է իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը (լավագույն ջանքեր)՝ Արժեթղթերը ամբողջ ծավալով տեղաբաշխելու նպատակով, սակայն չի պարտավորվում Արժեթղթերի թողարկման չտեղաբաշխված մասը ձեռք բերել անձամբ սեփականության իրավունքով, եթե Արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է ոչ ամբողջական ծավալով:
Բրոքերային գործառնություն	Հաճախորդի Պատվերի հիման վրա Ընկերության կողմից իր անունից և Հաճախորդի հաշվին Արժեթղթերի, Ածանցյալ

	ֆինանսական գործիքների և Արտարժույթի ձեռքբերումը և/կամ վաճառքը, կամ Հաճախորդի համապատասխան Պատվերի ընդունումը և փոխանցումը այլ անձի (բրոքեր, ենթաբրոքեր) կատարմանը:
Բրոքերային ծառայություններ	Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հետևյալ ներդրումային ծառայություններից և 26-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված հետևյալ Ոչ հիմնական ծառայություններից մեկը կամ մի քանիսը՝ • Հաճախորդներից Արժեթղթերով և/կամ Աճանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կատարման համար Պատվերների ստացում և հաղորդում, • Հաճախորդի հաշվին և Ընկերության անունից Արժեթղթերով և/կամ Աճանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքում, • Հաճախորդի հաշվին և նրա անունից Արժեթղթերով և/կամ Աճանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքում, • Հաճախորդի հաշվին Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացում:
ԿԲ	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ
Գործադիր տնօրեն	Ընկերության կառավարման միանձնյա մարմին, որը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումը:
Հաճախորդ	Անձ, որն Ընկերության հետ կնքել է կամ ցանկանում է կնքել Պայմանագիր:
Հաճախորդների հաշվարկային հաշիվ	Ընկերության կողմից առևտրային բանկում բացված դրամական հաշիվ, որում հաշվառվում են Հաճախորդներին պատկանող և ծառայությունների շրջանակներում օգտագործման նպատակով (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ Արժեթղթերով և/կամ Աճանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքման) Ընկերության տիրապետմանը փոխանցված դրամական միջոցները:
Ընկերություն	«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ
Շահերի բախման կանխարգելման և հաղթահարման քաղաքականություն	Սույն Կանոնների 10-րդ գլխով սահմանված քաղաքականությունը:
Պայմանագիր	Ընկերության սահմանած ձևով Ընկերության և Հաճախորդի միջև կնքվող՝ Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագիր:
Արժույթ	ՀՀ դրամ և/կամ Արտարժույթ:
Պահառություն	Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ծառայություն, որը ենթադրում է Արժեթղթերի հաշիվների

	բացում, դրանցում գրառումների (գործառնությունների) կատարում:
Ածանցյալ ֆինանսական գործիք	Օրենքով սահմանված իմաստով:
Ֆիդուցիար պարտականություն	Ընկերության պարտականությունը՝ Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունները մատուցել պատշաճ մասնագիտական մակարդակով, ճշգրտությամբ և ուշադրությամբ՝ գործելով բարեխղճորեն, ի շահ Հաճախորդի:
Արտարժույթ	Օտարերկրյա արժույթ՝ համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում կիրառվող նշանակության:
Ֆունկցիոնալ ենթահաշիվ	Հաճախորդի Ներդրումային հաշվի շրջանակում բացվող ներքին հաշիվ, որը նախատեսված է գործառական, վերլուծական կամ հաշվետու նպատակների համար: Ֆունկցիոնալ ենթահաշիվը չի հանդիսանում առանձին իրավական կամ պայմանագրային հաշիվ և չի փոխում Հաճախորդի՝ համապատասխան Ներդրումային հաշվում գրանցված Ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը:
Ներդրումային հաշիվ	Ընկերության կողմից Հաճախորդի համար բացված համապարփակ հաշիվ, որը միավորում է Հաճախորդի Արժեթղթերն ու դրամական միջոցները՝ միասնական պայմանագրային շրջանակում:
Ներդրումային խորհրդատվություն	Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ծառայություն է, որը ներառում է Հաճախորդին ուղղված անձնական խորհրդատվություն, առաջարկություն կամ նմանատիպ այլ գործողություն կամ ծառայություն, որոնք առնչվում են Արժեթղթերով կամ Ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքմանը, և կարող են ներառել հետևյալից մեկը կամ մի քանիսը. • Խորհրդատվություն Արժեթղթերի կամ Ածանցյալ ֆինանսական գործիքների ձեռքբերման, վաճառքի, բաժանորդագրության, մարումի, պահման, երաշխավորման կամ այլ գործարքների վերաբերյալ, • Խորհրդատվություն՝ հատուկ Արժեթղթից կամ Ածանցյալ ֆինանսական գործիքից բխող իրավունքների իրականացնելու կամ չիրականացնելու վերաբերյալ, որոնք առնչվում են տվյալ Արժեթղթի կամ Ածանցյալ ֆինանսական գործիքի ձեռքբերման, վաճառքի, բաժանորդագրության, մարումի, պահման, երաշխավորման կամ այլ գործարքների հետ:
Ներդրումային ծառայություններ	Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ծառայությունները:
Օրենք	Հայաստանի Հանրապետության «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքը:

Ղեկավար	Ընկերության այն պաշտոնատար անձինք, որոնք ընդգրկվում են Օրենքով սահմանված՝ «ներդրումային ընկերության ղեկավար» բնորոշման շրջանակներում:
Շուկա ստեղծողի ծառայություններ	Արժեթղթերի իրացվելիությունն ապահովելու նպատակով Ընկերության կողմից Հայաստանի ֆոնդային բորսայի (AMX) կամ այլ կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով այդ Արժեթղթերի շարունակական երկկողմանի գնանշումների կատարում և իր հաշվին ու իր անունից դրանցով գործարքների կնքում:
Անվանատիրոջ հաշիվ	Պահառուի անունով բացված Արժեթղթերի հաշիվ, որում հաշվառվում են սեփականության իրավունքով պահառուի հաճախորդներին պատկանող Արժեթղթերը:
Ոչ հիմնական ծառայություններ	Օրենքի 26-րդ հոդվածով և ԿԲ համապատասխան կանոնակարգերով սահմանված ոչ հիմնական ծառայությունները, որոնք միջազգային պրակտիկայում հայտնի են որպես օժանդակ ծառայություններ:
Ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ	Հաճախորդ, որը չի բավարարում Օրենքով սահմանված Պրոֆեսիոնալ հաճախորդի չափանիշներին և/կամ Ընկերության կողմից սույն Կանոններով սահմանված կարգով չի դասակարգվել որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ:
Պատվեր	Հաճախորդի կողմից Ընկերությանը տրված համապատասխան հանձնարարական, որի միջոցով նա պահանջում է կատարել որևէ գործողություն (ներառյալ՝ գործարքի կնքումը) Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման շրջանակում:
Պատվերների կատարման քաղաքականություն	Սույն Կանոնների 11-րդ գլխով սահմանված քաղաքականությունը:
Գործընկեր	Յուրաքանչյուր երրորդ անձի դեպոզիտարիա, պահառու, բրոքեր, պորտֆելի կառավարիչ կամ այլ պրոֆեսիոնալ ծառայություններ մատուցող կազմակերպություն, որը համագործակցում է Ընկերության հետ և կարող է ներգրավվել Ընկերության կողմից՝ Հաճախորդին սույն Կանոններին համապատասխան ծառայություններ մատուցելու կամ դրանց իրականացմանը նպաստելու նպատակով:
Պորտֆելի կառավարում	Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված ծառայություն է, որը հատկապես ներառում է՝ Արժեթղթերի, Արժեթղթերում ներդրվելիք դրամական միջոցների, ինչպես նաև վստահելի կառավարման շրջանակում ձևավորված և Հաճախորդի սեփականությամբ, սակայն ղեկավարի կառավարման ներքո գտնվող Ակտիվների կառավարումը, որոնք կառավարվում են Հաճախորդի կամ նրա կողմից նշված երրորդ անձի (շահառուի) օգտին, Հաճախորդի կողմից տրված հանձնարարականների հիման վրա:
Հաճախորդի Ակտիվների տիրապետում	Ընկերության կողմից Հաճախորդի Ակտիվների պահպանումը, դրանց հաշվառումը Ընկերության հաշվին կամ դրանք փաստացի տիրապետելու այլ հնարավորություն:

Կանոնակարգ 33	ԿԲ «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33:
Կանոնակարգ 4/06	ԿԲ «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06:
Կանոնակարգ 4/07	ԿԲ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07:
Պրոֆեսիոնալ հաճախորդ	Հաճախորդ, որը համապատասխանում է Օրենքով սահմանված չափանիշներից որևէ մեկին կամ մի քանիսին, մասնավորապես՝ 1) Ներդրումային ընկերություններ, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղեր, բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, ներդրումային և կենսաթոշակային ֆոնդեր և դրանց կառավարիչներ, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձինք, որոնք իրենց երկրի օրենսդրությամբ ունեն այս ենթակետում նշված գործունեություններից որևէ մեկը իրականացնելու իրավունք: 2) Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքները, ԿԲ, օտարերկրյա պետությունները, օտարերկրյա տեղական ինքնակառավարման մարմինները և օտարերկրյա կենտրոնական բանկերը: 3) Միջազգային ֆինանսական կազմակերպություններ, այդ թվում՝ Միջազգային դրամական հիմնադրամը, Եվրոպական կենտրոնական բանկը, Եվրոպական ներդրումային բանկը: 4) Իրավաբանական անձինք, որոնք բավարարում են ստորև բերված երեք չափանիշներից առնվազն երկուսին՝ • Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու նախորդ տարվա ավարտին տվյալ անձի հաշվեկշռային Ակտիվների արժեքը գերազանցում է 500 միլիոն ՀՀ դրամը, • Ներդրումային ծառայությունների մատուցման Պայմանագիր կնքելու նախորդ տարվա ընթացքում գործունեությունից առաջացած շրջանառությունը գերազանցում է 1 միլիարդ ՀՀ դրամը՝ ըստ ՀՀ հարկային օրենսգրքի, • Ներդրումային ծառայությունների մատուցման Պայմանագիր կնքելու նախորդ ամսվա ավարտին (կամ եթե տվյալները հայտնի չեն՝ նախորդ ամսից մեկ ամիս առաջ) անձի ընդհանուր կապիտալը կազմում է առնվազն 50 միլիոն ՀՀ դրամ: Եթե Դիմումում առկա է համապատասխան նշում, ապա Ընկերությունը կարող է Հաճախորդին դասակարգել որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ, եթե նա բավարարում է հետևյալ երեք չափանիշներից առնվազն երկուսին՝ 1) Դիմումի ներկայացմանը նախորդած չորս եռամսյակների ընթացքում, միջին հաշվով յուրաքանչյուր եռամսյակում

	իրականացրել է առնվազն 10 գործարք արժեթղթերի շուկայում, որոնցից յուրաքանչյուրի միջին ծավալը կազմում է առնվազն 1 միլիոն ՀՀ դրամ, 2) Դիմումի ներկայացման պահին անձի արժեթղթերի պորտֆելի ծավալը գերազանցում է 100 միլիոն ՀՀ դրամ, 3) Ունի առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ֆինանսական շուկայում, որը պահանջում է այնպիսի գիտելիքներ, որոնք առնչվում են այն ծառայություններին, որոնց համար անձը ցանկանում է դասակարգվել որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ:
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության օրինական վճարամիջոցը:
Տեղեկանք	Ընկերության կողմից Հաճախորդի պահանջով տրվող փաստաթուղթ, որը պարունակում է տվյալներ Հաճախորդի Ներդրումային հաշիվների վերաբերյալ՝ բոլոր ծառայությունների կամ առանձին ծառայության շրջանակում:
Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ	Ընկերության և Հաճախորդի պայմանագրով սահմանված պաշտոնական հասցեները, էլեկտրոնային փոստի հասցեները և հեռախոսահամարները, որոնք ճանաչվում են որպես ապահով և հուսալի հաղորդակցության միջոցներ: Նշված միջոցների ձևաչափը սահմանված է Հավելված 5-ում, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժան մաս:
Հաշվետվություններ	Ըստ ԿԲ Կանոնակարգ 4/07-ի սահմանման:
Արժեթուղթ	Օրենքով սահմանված իմաստով:
Քաղվածք	Ընկերության կողմից Հաճախորդին տրամադրվող փաստաթուղթ, որը պարունակում է տվյալներ Հաճախորդի հաշվին հաշվառված Ակտիվների մնացորդի և հաշվին կատարված գործարքների վերաբերյալ՝ ըստ Հաճախորդի պահանջի կամ Կանոններով սահմանված պարբերականությամբ:
Սակագներ	Ընկերության կողմից սահմանված և պաշտոնական կայքում հրապարակված Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման սակագները, կամ սույն Կանոններով նախատեսված դեպքերում՝ Ընկերության և Հաճախորդի միջև սահմանված սակագները:
Գործարքների կնքման վայր	Ֆոնդային բորսաներ, այլ կարգավորվող կամ չկարգավորվող շուկաներ, որտեղ կնքվում են Արժեթղթերով, Ածանցյալ ֆինանսական գործիքներով և/կամ Արտարժույթով գործարքներ:
Տեղաբաշխում	Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ծառայություն, որը ենթադրում է Արժեթղթերի առաջին վաճառքի կազմակերպումն ու իրականացումը ներդրողներին՝ սույն Կանոններով սահմանված կարգով:

3. Պայմանագրի դրույթների ընդունման կարգ

3.1. Հաճախորդը, Պայմանագրի պայմանները ընդունելու և Ներդրումային հաշիվ բացելու նպատակով, ներկայացնում է Դիմում՝ Հավելվածով 1-ով սահմանված ձևաչափով, նշելով այն

Ծառայությունները, որոնցից ցանկանում է օգտվել: Ներդրումային խորհրդատվության և/կամ Պորտֆելի կառավարման ծառայություններ ընտրելու դեպքում Հաճախորդը լրացնում է նաև Հավելվածը 3Ա-ն:

3.2. Դիմումի ուսումնասիրությունից և Հաճախորդի գնահատումից հետո Ընկերությունը՝ կամ հաստատում է Դիմումը, կամ մերժում այն: Հաճախորդին Ընկերության որոշման մասին տեղեկացվում է գրավոր Ծանուցմամբ, որը կազմվում է Հավելված 2-ում սահմանված ձևով:

3.3. Դիմումը հաստատվելու դեպքում Պայմանագիրը համարվում է կնքված՝ Ծանուցման մեջ նշված ամսաթվից, Դիմումում նշված ծառայությունների շրջանակում և այնտեղ սահմանված էական պայմաններով: Պայմանագրի կնքման փաստը հաստատելու նպատակով կողմերը կարող են լրացուցիչ կերպով ստորագրել երկկողմանի փաստաթուղթ՝ Հավելված 9-ում կամ Հավելված 9Ա-ում սահմանված ձևաչափով:

3.4. Դիմումը մերժվելու դեպքում Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է մերժման Ծանուցում, որը կազմվում է Հավելված 2-ում սահմանված ձևաչափով: Ընկերությունը պարտավոր չէ բացահայտել մերժման պատճառները:

3.5. Յուրաքանչյուր Հաճախորդ Ընկերության հետ կնքում է միայն մեկ Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների մատուցման Պայմանագիր, որի շրջանակում բացվում է նվազագույնը մեկ ներդրումային հաշիվ, որը արտացոլում է Հաճախորդի իրավահարաբերությունները Ընկերության հետ: ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության լիցենզիայի շրջանակներում՝ Հաճախորդի համար կարող են բացվել լրացուցիչ Ներդրումային հաշիվներ, որոնք ընդգրկված են սույն միակ Պայմանագրի շրջանակում: Յուրաքանչյուր Ներդրումային հաշվի շրջանակում Ընկերությունը կարող է բացել Ֆունկցիոնալ ենթահաշիվներ՝ գործունեության տեսակները տարանջատելու նպատակով (օրինակ՝ Պորտֆելի կառավարում, Ներդրումային խորհրդատվություն, բրոքերային գործունեություն կամ արտաքին հարթակների միջոցով առևտուր), որոնք կարող են բացվել ինչպես Հաճախորդի պահանջով, այնպես էլ Ընկերության հայեցողությամբ՝ ավտոմատ կերպով: Ֆունկցիոնալ ենթահաշիվները ինքնուրույն իրավական հաշիվներ չեն և չեն անդրադառնում համապատասխան Ներդրումային հաշվի ներքո գրանցված Ակտիվների սեփականության իրավունքների վրա:

3.6. Հաճախորդը կարող է դիմումի միջոցով պահանջել Ներդրումային կամ Ոչ հիմնական ծառայությունների ակտիվացում կամ դադարեցում, այդ թվում՝ Պորտֆելի կառավարման կամ Ներդրումային խորհրդատվության ծառայությունների վերաբերյալ, ներկայացնելով Ծառայության փոփոխության դիմում՝ Հավելված 3-ում սահմանված ձևաչափով:

3.6.1. Ծառայության փոփոխության դիմումը կարող է ներառել՝

- այն ծառայությունները, որոնք Հաճախորդը ցանկանում է ավելացնել կամ դադարեցնել,
- անհրաժեշտության դեպքում՝ ներդրումային պարամետրերը, նպատակները և սահմանափակումները, որոնք վերաբերում են հայտագրված ծառայությանը,
- ինչպես նաև նոր Ներդրումային հաշիվ կամ հատուկ Ֆունկցիոնալ ենթահաշիվ բացելու հանձնարարականը:

3.6.2. Ընկերության կողմից ընդունված Ծառայության փոփոխության դիմումը դառնում է Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների մատուցման Պայմանագրի անբաժան մասը և համարվում է Հաճախորդի բացահայտ համաձայնությունը՝ ստանալու ընտրված ծառայությունները՝ համաձայն սույն Կանոնների և կիրառելի օրենսդրության:

3.6.3. Ընկերությունը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկատվություն կամ փաստաթղթեր՝ համապատասխանության և հարմարության գնահատման համար՝ նախքան ծառայությունների ակտիվացումը: Ծառայության ակտիվացման և օգտագործման

հնարավորության մասին Հաճախորդը տեղեկացվում է համապատասխան ծանուցմամբ:

3.6.4. Ծառայությունների փոփոխման դիմումն ուսումնասիրելուց հետո Ընկերությունը հաստատում կամ մերժում է այն: Ընկերության որոշման մասին Հաճախորդը տեղեկացվում է գրավոր ծանուցմամբ՝ Հավելված 2-ով սահմանված ձևաչափով:

4. Հաճախորդներից պահանջվող տեղեկությունները և նրանց դասակարգման կարգը

4.1. Պայմանագիր կնքելուց առաջ (Դիմումի հաստատումից առաջ) Ընկերությունը՝ ՀՀ օրենսդրությամբ և ԿԲ կանոնակարգերով սահմանված կարգով, գնահատում է Հաճախորդի ֆինանսական վիճակը, ներդրումային գործունեության նպատակները, ներդրումային գիտելիքներն ու փորձը: Այդ գնահատման հիման վրա Ընկերությունը Հաճախորդին դասակարգում է որպես՝

- Պրոֆեսիոնալ հաճախորդ, կամ
- Ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ:

4.2. Դասակարգման կարգ

4.2.1. Դասակարգման նպատակով Հաճախորդը լրացնում է Ընկերության կողմից տրամադրվող «Ճանաչիր քո հաճախորդին» հարցաշարը, որի միջոցով տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն:

4.2.2. Այն Հաճախորդը, որը ցանկանում է դասակարգվել որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ, նշում է այդ ցանկությունը Դիմումում՝ համապատասխան վանդակը նշելով: Ընկերությունը հաստատում է այդ կարգավիճակը միայն այն դեպքում, եթե Հաճախորդը բավարարում է Օրենքով և ԿԲ կանոնակարգերով սահմանված չափանիշներին:

4.2.3. Դասակարգման արդյունքները փաստաթղթավորվում են Ընկերության ներքին համապատասխանության ձևաթղթերով, որոնք պահվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, սակայն սույն Կանոնների մաս չեն կազմում:

4.3. Ընկերությունը Հաճախորդին գրավոր կերպով պաշտոնապես տեղեկացնում է նրա դասակարգման մասին (Պրոֆեսիոնալ կամ Ոչ պրոֆեսիոնալ)՝ օգտագործելով Ծանուցման ձևաթուղթը (Հավելված 2) կամ այլ գրավոր ծանուցում: Հավելված 1-ի ձևով Դիմում ներկայացնելով՝ Հաճախորդը հաստատում է, որ տեղեկացված է տվյալ դասակարգման հետևանքների մասին, այդ թվում՝ ներդրողի պաշտպանության մակարդակի և կիրառվող իրավունքների մասին:

4.4. Եթե Ընկերության գնահատմամբ՝ Հաճախորդը այլևս չի բավարարում Պրոֆեսիոնալ հաճախորդի դասակարգման չափանիշներին՝ ելնելով Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվությունից կամ Ընկերության ունեցած այլ տվյալներից, կամ եթե պարզվում է, որ Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվությունը անհուսալի է, ապա Ընկերությունը կհանի Հաճախորդին «Պրոֆեսիոնալ հաճախորդ» կարգավիճակից, կծանուցի Հաճախորդին այս մասին մեկ (1) աշխատանքային օրվա ընթացքում և համապատասխանաբար կփոփոխի Հաճախորդի դասակարգումը:

4.5. Եթե Հաճախորդը դիմում է ԿԲ-ին որպես որակավորված ներդրող գրանցվելու համար, ապա Ընկերությունը՝ Դիմումը փոխանցում է ԿԲ՝ Կանոնակարգ 4/06-ի սահմանված կարգով: Եթե Հաճախորդը ցանկանում է հանվել որակավորված ներդրողների բազայից, ապա Ընկերությունը կազմակերպում է համապատասխան դիմումի ներկայացումը ԿԲ՝ սույն կետի պահանջներին համապատասխան:

4.6. Պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում և՛ Ընկերությունը, և՛ Հաճախորդը կարող են նախաձեռնել Հաճախորդի դասակարգման փոփոխություն (ներառյալ՝ որպես որակավորված ներդրող գրանցում կամ գրանցումից հանում), եթե նրանք համարում են, որ տվյալ պահին կամ

կոնկրետ գործարքի/գործիքի առնչությամբ Հաճախորդի գիտելիքները և փորձը այլևս չեն համապատասխանում նախորդ դասակարգման հիմք հանդիսացած չափանիշներին:

4.7. Եթե Ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդը դիմում է, որպեսզի դասակարգվի որպես Պրոֆեսիոնալ Հաճախորդ, ապա այդ անցումը ենթակա է նոր գնահատման՝ Ընկերության կողմից՝ սույն գլխում սահմանված կարգով:

4.8. ՀՀ օրենսդրությամբ և ԿԲ կանոնակարգերով նախատեսված դեպքերում Հաճախորդը կարող է դասակարգվել որպես Պրոֆեսիոնալ հաճախորդ և/կամ որակավորված ներդրող՝ առանց սույն գլխով սահմանված դասակարգման ամբողջական ընթացակարգի անցնելու, այսինքն՝ ավտոմատ կերպով:

5. Ծառայությունների մատուցման կարգ

5.1. Ընդհանուր պայմաններ.

5.1.1. Ընկերությունը մատուցում է Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունները՝ համաձայն ՀՀ օրենսդրության, Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների մատուցման Պայմանագրի և սույն Կանոնների, առաջնորդվելով իր՝ Հաճախորդի հանդեպ ունեցած Ֆիդուցիար պարտականություններով:

5.1.2. Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների մատուցման ընթացքում Ընկերությունը պահպանում է Շահերի բախման կանխարգելման և հաղթահարման քաղաքականության պահանջները՝ սահմանված սույն Կանոնների 10-րդ գլխում:

5.1.3. Պատվերները ներկայացվում են Պայմանագրով և սույն Կանոններով սահմանված կարգով՝ օգտագործելով Ընկերության կողմից սահմանված ձևերը:

5.1.4. Պատվերների մշակումը և կատարումը իրականացվում է ըստ Պատվերների կատարման քաղաքականության՝ սահմանված սույն Կանոնների 11-րդ գլխում:

5.1.5. Ընկերությունը վարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր անհրաժեշտ գրառումները՝ առնչվող մատուցվող Ներդրումային և Ոչ հիմնական ծառայություններին, ինչպես նաև տրամադրում է Հաճախորդին համապատասխան հաշվետվությունները՝ Պայմանագրով սահմանված կարգով:

5.1.6. Ընկերությունը չի երաշխավորում ներդրումների եկամտաբերության որևէ մակարդակ: Հաճախորդի ներդրումների արժեքը կարող է տատանվել՝ շուկայական տարբեր գործոնների ազդեցության արդյունքում:

5.1.7. Ընկերությունը իրավասու է՝ միակողմանի կերպով լուծել սույն Պայմանագիրը և փակել Հաճախորդի Ներդրումային հաշիվը, եթե Հաճախորդը մեկ (1) տարուց ավելի ժամանակահատվածում որևէ գործողություն չի կատարել և/կամ կապ չի պահպանել Ընկերության հետ, կամ եթե հաշվի մնացորդը երեք (3) անընդմեջ ամիս շարունակ բացասական է մնացել: Այդպիսի դեպքերում Ընկերությունը պարտավոր է Հաճախորդին տրամադրել առնվազն տաս (10) աշխատանքային օրվա նախնական գրավոր ծանուցում: Ծանուցման ժամանակահատվածում Հաճախորդը կարող է դիմել հաշվի վերակտիվացման համար կամ նախաձեռնել մնացած Ակտիվների դուրսբերում կամ փոխանցում: Ներդրումային հաշիվ(ներ)ի փակվելուց հետո Հաճախորդի մնացորդային Ակտիվները փոխանցվում են Ընկերության կողմից պահվող առանձին (սեգրեգացված) հաշվին՝ հինգ (5) տարվա ժամկետով, որի ընթացքում Հաճախորդը կարող է ցանկացած պահի պահանջել դրանք: Այդ ժամկետի ավարտից հետո չպահանջված Ակտիվները կարող են իրացվել, և դրանց իրացման արդյունքները փոխանցվել Ընկերության սեփական հաշվին, որից հետո Ընկերությունը այլևս պարտավորություններ չի կրում Հաճախորդի հանդեպ: Ընկերությունը վարում է համապատասխան ներքին հաշվառումներ այդ Ակտիվների վերաբերյալ և գործադրում է բոլոր ողջամիտ ջանքերը՝ Հաճախորդին հայտնաբերելու և տեղեկացնելու դրանց տնօրինելուց առաջ:

5.1.8. Ընկերությունն իրավունք ունի միակողմանիորեն և առանց նախապես ծանուցման լուծել Պայմանագիրը և փակել Հաճախորդի Ներդրումային հաշիվը հետևյալ դեպքերում.

- Պայմանագրի շարունակականությունը և/կամ Հաճախորդի Ներդրումային հաշիվը չփակելը կարող է հանգեցնել սանկցիաների կամ սահմանափակող միջոցների խախտման կամ դրանց պահանջներին չհամապատասխանելու՝ Ընկերության ներքին ՓԼԱՖ քաղաքականությանը համաձայն,
- Ընկերության ներքին համապատասխանության մարմնի կամ աշխատակցի կողմից տրված եզրակացությամբ սահմանվել է Պայմանագիրը լուծելու և Հաճախորդի Ներդրումային հաշիվը փակելու անհրաժեշտություն՝ ՓԼԱՖ օրենսդրության պահանջներին համապատասխան:

5.1.9. Հաշիվը համարվում է «ոչ ակտիվ», եթե այն չի օգտագործվել վեց (6) ամիս և ավելի և/կամ վերջին գործարքը կատարվել է վեց ամիս առաջ և հաշվին Արժեթղթեր չկան: Ոչ ակտիվ հաշիվների նկատմամբ կիրառվում են հետևյալ պայմանները.

- Ոչ ակտիվ հաշվի դեպքում ՓԼԱՖ ընթացակարգերի կիրառում անհրաժեշտ չէ, եթե Հաճախորդը դիմում չի ներկայացրել հաշիվը վերագործարկելու համար:
- Ոչ ակտիվ հաշիվների վերաբերյալ հաշվետվությունները ավտոմատ կերպով չեն գեներացվում և չեն տրամադրվում Հաճախորդներին:
- Ոչ ակտիվ հաշիվը չի կարող միակողմանի փակվել (Պայմանագիրը չի կարող լուծվել), եթե չկա Ընկերության Գործադիր տնօրենի կամ այլ լիազորված մարմնի պաշտոնական որոշում:
- Ոչ ակտիվ հաշվի միջոցով գործարքներ կատարելու համար անհրաժեշտ է հաշվի վերագործարկում, որի նպատակով Հաճախորդը կարող է պարտավոր լինել թարմացնել ՓԼԱՖ ընթացակարգերով պահանջվող տեղեկատվությունը՝ Ընկերության ՓԼԱՖ քաղաքականությանը համաձայն:

5.2. Ներդրումային հաշիվ

Յուրաքանչյուր Հաճախորդ պարտավոր է ունենալ Ընկերությունում առնվազն մեկ Սեփական Ներդրումային հաշիվ, որը հանդիսանում է տվյալ Հաճախորդին մատուցվող բոլոր Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների իրավական և պայմանագրային շրջանակը:

Յուրաքանչյուր Ներդրումային հաշիվ հանդիսանում է բազմավալյուտային և բազմագործիքային, ինչը հնարավորություն է տալիս Հաճախորդին պահել և գործարկել տարբեր ֆինանսական գործիքներ և արժույթներ՝ մեկ պայմանագրային հարաբերության շրջանակում: Լրացուցիչ Ներդրումային հաշիվ(ներ) կարող են բացվել օրենքով սահմանված կամ Հաճախորդի կարգավորող կարգավիճակից բխող պահանջների դեպքում, օրինակ՝ եթե Հաճախորդը հանդիսանում է լիցենզավորված ֆինանսական հաստատություն, կամ՝ այլ նպատակներով՝ ըստ սույն Կանոնների:

Ներդրումային հաշիվները դասակարգվում են հետևյալ կերպ՝

- Սեփական՝ հաշիվներ, որոնցում հաշվառվում են Հաճախորդի սեփական Ակտիվները:
- Հաճախորդների՝ հաշիվներ, որոնցում հասանելի են միայն լիցենզավորված ֆինանսական հաստատություններին, որոնք գործում են իրենց հաճախորդների անունից:

Հաճախորդների հաշիվները կարող են կառուցվել որպես՝

- Ընդհանրացված հաշիվներ, կամ
- Առանձնացված հաշիվներ՝

այն պայմանով, որ Հաճախորդը բացահայտի իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես պահանջվում է օրենսդրությամբ և Ընկերության ՓԼԱՖ ընթացակարգերով:

Լիցենզավորված ֆինանսական կազմակերպությունը կարող է միաժամանակ ունենալ և՛ Սեփական, և՛ Հաճախորդների Ներդրումային հաշիվներ:

Յուրաքանչյուր Ներդրումային հաշվի շրջանակում Ընկերությունը կարող է բացել Ֆունկցիոնալ ենթահաշիվներ՝ գործառնական և հաշվետու նպատակներով, որոնք կարող են ներառել, բայց չսահմանափակվել հետևյալով՝

- Առևտրային հարթակի ենթահաշիվ՝ օգտագործվում է արտաքին առևտրային հարթակների միջոցով իրականացվող գործարքների համար,
- Ներդրումային խորհրդատվության ենթահաշիվ՝ բացվում է Ներդրումային խորհրդատվական ծառայությունների մատուցման կապակցությամբ,
- Պորտֆելի կառավարման ենթահաշիվ՝ բացվում է Պորտֆելի կառավարման ծառայությունների մատուցման նպատակով:

Ֆունկցիոնալ ենթահաշիվները կարող են բացվել՝ Հաճախորդի դիմումի հիման վրա, կամ անհրաժեշտության դեպքում՝ գործառնական, ծառայությունների մատուցման կամ հաշվետու նպատակներով՝ ավտոմատ կերպով Ընկերության նախաձեռնությամբ, որի դեպքում Հաճախորդը պատշաճ կերպով տեղեկացվում է: Ֆունկցիոնալ ենթահաշիվները առանձին իրավաբանական հաշիվներ չեն, չեն ստեղծում նոր պայմանագրային հարաբերություններ և չեն ազդում Ակտիվների սեփականության իրավունքի վրա, որոնք գրանցված են համապատասխան Ներդրումային հաշվում: Նրանց նպատակն է բացառապես՝ ծառայությունների տարանջատումը, հաշվառման պարզեցումը, և հաշվետվությունների ու տեղեկատվական թափանցիկության բարելավումը:

6. Ներդրումային ծառայությունների մատուցման կարգ

6.1. Բրոքերային ծառայություններ

6.1.1. Գործարքների իրականացում Հաճախորդի անունից

6.1.1.1. Ընկերությունը մատուցում է Բրոքերային ծառայություններ՝ գործելով իր անունից, սակայն Հաճախորդի հաշվին: Բրոքերային գործողությունները կարող են իրականացվել կարգավորվող և/կամ չկարգավորվող շուկաներում, որոնց մուտքը Ընկերությունն ունի անմիջական կամ միջնորդավորված կերպով՝ իր կամ ենթաբրոքերների միջոցով:

6.1.1.2. Հաճախորդի Պատվեր ստանալուց հետո Ընկերությունը կարող է իրականացնել Արժեթղթերի, Ածանցյալ ֆինանսական գործիքների և/կամ Արտարժույթի գործարքներ՝ ինչպես Հաճախորդի անունից, այնպես էլ նրա հաշվին, եթե Ընկերության մասնագիտական գնահատմամբ դա ապահովում է առավել բարենպաստ կատարման պայմաններ Հաճախորդի համար:

6.1.1.3. Ընկերությունը կարող է նաև գնել կամ վաճառել Արժեթղթեր, Ածանցյալ ֆինանսական գործիքներ և/կամ Արտարժույթ անմիջապես Հաճախորդից կամ Հաճախորդին, գնում-վաճառքի պայմանագրի հիման վրա, եթե տվյալ գործարքը Հաճախորդի համար ապահովում է ամենաօպտիմալ պայմանները:

6.1.2. Գործարքների իրականացում՝ Հաճախորդի Պատվերների փոխանցման միջոցով

6.1.2.1. Այն դեպքերում, երբ Ընկերությունն անմիջական մուտք չունի այն շուկա, որտեղ առևտուր է կատարվում համապատասխան Արժեթղթով, Ածանցյալ ֆինանսական գործիքով և/կամ Արժույթով, Հաճախորդի Պատվերը կարող է փոխանցվել Գործընկերոջը՝ ներառյալ՝ երրորդ կողմի բրոքերներին, ենթաբրոքերներին, բանկերին կամ այլ պրոֆեսիոնալ միջնորդներին, այդ թվում՝ էլեկտրոնային հարթակների միջոցով (օրինակ՝ Bloomberg EMSX կամ համանման համակարգեր)՝ կատարման նպատակով:

6.1.2.2. Նման Գործընկերների՝ ներառյալ երրորդ կողմի հակակողմերի, միջնորդների կամ կատարման վայրերի ընտրությունը կատարվում է սույն

Կանոնների 13-րդ գլխով սահմանված չափանիշների և ընթացակարգերի համաձայն:

6.1.2.3. Նույնիսկ այն դեպքում, երբ Ընկերությունն ունի շուկայի անմիջական մուտք, այն կարող է որոշել կատարել Հաճախորդի Պատվերը այլ Գործընկերոջ միջոցով, եթե Ընկերության մասնագիտական կարծիքով դա կարող է ապահովել ավելի բարենպաստ պայմաններ կամ բարձր իրացվելիություն/գին:

6.1.2.4. Ընկերության ֆիդուցիար պարտականությունը տվյալ Պատվերի նկատմամբ համարվում է կատարված, եթե այն ցուցաբերել է պատշաճ խնամք Գործընկերոջ ընտրության հարցում և պատշաճ ձևով փոխանցել է Պատվերը կատարման՝ սույն Կանոններում սահմանված պայմաններին և ընթացակարգերին համապատասխան: Այդ պահից հետո Ընկերությունը պատասխանատվություն չի կրում տվյալ երրորդ կողմերի գործողությունների, անգործության կամ կատարման որակի համար:

6.1.3. Պատվերների ներկայացման և կատարման գործընթաց

6.1.3.1. Բրոքերային գործարքները իրականացվում են Արժեթղթերով, Ածանցյալ ֆինանսական գործիքով և/կամ Արժույթով, որոնք առևտուր են արվում ինչպես կարգավորվող, այնպես էլ չկարգավորվող շուկաներում: Պատվերները կատարվում են Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականների հիման վրա, որոնք փոխանցվում են Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով (Հավելված 5)՝ Ընկերության կողմից սահմանված ձևաչափով: Այդ ալիքները պետք է լինեն անվտանգ, գրանցված, վերականգնվող և նախապես հաստատված ինչպես Ընկերության, այնպես էլ Հաճախորդի կողմից: Պատվեր ստանալուց հետո Ընկերությունը կարող է այն իրականացնել ինչպես կարգավորվող առևտրային հարթակներում, այնպես էլ արտաբորսայական (OTC) շուկաներում՝ անմիջապես կամ Գործընկերոջ միջոցով:

6.1.3.2. Ոչ ստանդարտ ձևաչափով կամ հատուկ պարամետրերով ներկայացված Պատվերները կարող են ընդունվել՝ եթե կողմերը պայմանավորվեն այդ մասին Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով: Այդպիսի հատուկ հանձնարարականները դառնում են Պատվերի անբաժան մասը:

6.1.3.3. Պատվերները կարող են ներկայացվել հետևյալ ձևերով՝

- Թղթային ձևով.
  Պատվերները կարող են ներկայացվել թղթային ձևաչափով՝ պատշաճ կերպով ստորագրված Հաճախորդի կամ Հաճախորդի լիազորված ներկայացուցչի կողմից և ֆիզիկապես տրամադրվել Ընկերության գրանցված գրասենյակ: Այդ Պատվերները Ընկերությունը հաստատում է ստորագրությամբ կամ ստացման այլ հաստատմամբ:
- Էլեկտրոնային ձևով.
  Պատվերները կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով՝ օգտագործելով Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով: Դրանք կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում՝
  - Ընկերության և Հաճախորդի կողմից հաստատված կորպորատիվ էլեկտրոնային փոստի հասցեներ,
  - Ապահով հաղորդակցման հարթակներ (օրինակ՝ WhatsApp, Telegram, Viber կամ կողմերի համաձայնեցրած այլ համակարգեր),

- Ընկերության Հաճախորդի պորտալը կամ պատվերների էլեկտրոնային ներկայացման այլ ինտերֆեյսներ,
- Bloomberg տերմինալներ կամ նմանատիպ պրոֆեսիոնալ առևտրային համակարգեր,
- Ընկերության կամ նրա Գործընկերների կողմից օգտագործվող առևտրային տերմինալներ և հարթակներ:

Էլեկտրոնային Պատվերները չեն պահանջում ձեռագրային կամ թվային ստորագրություն, եթե ներկայացվել են Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով: Բոլոր նման Պատվերները գրանցվում, պահվում և արխիվացվում են Ընկերության կողմից՝ էլեկտրոնային կրիչներում, պատվերների կառավարման համակարգերում, հաղորդագրությունների մատյաններում կամ էկրանապատկերների տեսքով՝ դրանց հետագծելիությունը, աուդիտային վերահսկելիությունը և ապացուցողական արժեքը ապահովելու համար:

6.1.3.4. Ընկերությունը Պատվերների մշակման և կատարման ընթացակարգերը իրականացնում է սույն Կանոնների 10-րդ և 11-րդ գլուխներով սահմանված ժամկետներին և ընթացակարգով:

6.1.3.5. Հաճախորդը կարող է չեղարկել կամ փոփոխել Պատվերը՝ մինչև դրա կատարումը՝ Ընկերությանը համապատասխան կերպով տեղեկացնելով Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով:

6.1.3.6. Հաճախորդի Պատվերը չի կարող մշակվել, եթե նրա Ներդրումային հաշվին առկա դրամական միջոցները բավարար չեն Պատվերը կատարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդին տրամադրվել են վարկային ծառայություններ գործարքներ իրականացնելու նպատակով և Հաճախորդը այդ ծառայությունների շրջանակում ունի տրամադրված վարկ:

6.1.3.7. Ընկերությունը Բրոքերային ծառայությունների շրջանակում իրականացնում է Արժեթղթերով, Ածանցյալ ֆինանսական գործիքներով և/կամ Արտարժույթով կնքված գործարքների վերջնական հաշվարկի համար անհրաժեշտ գործողությունները՝ գործարքների իրականացման համար անհրաժեշտ և դրանց արդյունքում ստացված Ակտիվները փոխանցելով և գրանցելով համապատասխան Հաճախորդների հաշվին:

6.2. Ներդրումային խորհրդատվություն

6.2.1. Ներդրումային խորհրդատվական ծառայությունները բաղկացած են Արժեթղթերին, Ածանցյալ ֆինանսական գործիքներին և/կամ Արժույթներին վերաբերող անձնական (պերսոնալիզացված) առաջարկություններից, ներառյալ՝ դրանց ձեռքբերումը, վաճառքը, բաժանորդագրությունը, մարումը, պահումը կամ դրանցից բխող իրավունքների իրականացումը: Խորհրդատվությունը տարբերակվում է Պորտֆելի կառավարման ծառայությունից. ներդրումային բոլոր որոշումների համար ամբողջական պատասխանատվությունը մնում է Հաճախորդի վրա:

6.2.2. Խորհրդատվությունը տրամադրվում է Ընկերության համապատասխան որակավորմամբ մասնագետների կողմից: Առաջարկությունները կարող են տրամադրվել բանավոր կամ գրավոր՝ Հաճախորդի հետ համաձայնեցված Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով: Յուրաքանչյուր անհատական Ներդրումային խորհրդատվություն արձանագրվում է «Փաստաթղթավորված Ներդրումային խորհրդատվության ձև»-ում, որը հանդիսանում է Ընկերության ներքին գրառումների մասը և կարող է տրամադրվել Հաճախորդին՝ վերջինիս պահանջով:

6.2.3. Խորհրդատվական ծառայությունները մատուցվում են բացառապես Հաճախորդի բացահայտ դիմումի հիման վրա՝ Ծառայության փոփոխության դիմումով (Հավելված 3): Նման ծառայություն հայտագրելու դեպքում Հաճախորդը լրացնում է համապատասխանության և հարմարության հարցաշարը (Հավելված 3Ա), որը հավաքում է տվյալներ Հաճախորդի ներդրումային նպատակների, գիտելիքների և փորձի, ֆինանսական վիճակի, ռիսկի հանդուրժողականության և սահմանափակումների մասին (ամբողջությամբ՝ «Խորհրդատվական պրոֆիլ»):
Մինչ որևէ Ներդրումային խորհրդատվություն տրամադրելը Ընկերությունը գնահատում է ծառայության և ֆինանսական գործիքների համապատասխանությունը և նպատակահարմարությունը՝ ՀՀ օրենքի և ԿԲ կիրառելի կանոնակարգերի համաձայն: Եթե այս գնահատմամբ Ընկերությունը եզրակացնում է, որ տվյալ ծառայությունը կամ գործիքը չի համապատասխանում Հաճախորդին, ապա նա տեղեկացնում է Հաճախորդին և կարող է մերժել ծառայության մատուցումը:

6.2.4. Ներդրումային հետազոտությունների, շուկայի վերլուծությունների կամ նման տեղեկատվական նյութերի տարածումը չի հանդիսանում անհատական խորհրդատվություն: Կրթական գործունեությունը, օրինակ՝ դասընթացներ, սեմինարներ կամ ընդհանուր շուկայի մեկնաբանություններ, դասակարգվում են որպես Ոչ հիմնական ծառայություններ և չեն գտնվում Ներդրումային խորհրդատվական ծառայությունները կարգավորող իրավական դաշտի ներքո:

6.2.5. Ներդրումների վերաբերյալ Ընկերությունը չի երաշխավորում որևէ արդյունք կամ եկամտաբերություն: Ներդրումային խորհրդատվական ծառայությունները չեն ընդգրկում իրավական, հաշվապահական կամ հարկային խորհրդատվություն, եթե կողմերը գրավոր հստակ այլ բան չեն պայմանավորվել:

6.2.6. Վճարներ, հաշվարկման շրջան և վաղ դադարեցում

6.2.6.1. Ներդրումային խորհրդատվական ծառայությունների դիմաց սահմանվում է պարբերական խորհրդատվական վարձատրություն, որի հաշվարկի հիմքը հանդիսանում են խորհրդատվության տակ գտնվող ակտիվները՝ ինչպես սահմանված է Սակագներում: Հաշվարկման ժամանակաշրջանը և մեթոդաբանությունը սահմանվում են Սակագներով, որը սույն Կանոնների անբաժան մասն է:

6.2.6.2. Վճարի հաշվարկը սկսվում է ծառայության ակտիվացման օրը, այսինքն՝ այն օրը, երբ Հաճախորդի Ծառայության փոփոխության դիմումը հաստատվում է և Ընկերությունը սկսում է մատուցել խորհրդատվություն: Վճարները կուտակվում են համամասնորեն (pro rata)՝ ամբողջ ծառայության ընթացքում՝ ելնելով խորհրդատվության տակ գտնվող ակտիվների օրական կամ ամսական արժեքից, ինչպես նախատեսված է Սակագներում:

6.2.6.3. Վճարի հաշվարկը շարունակվում է մինչ ավելի շուտ տեղի ունեցող հետևյալ իրադարձություններից որևէ մեկը.

- ծառայության դադարեցման օրը, երբ այն նախաձեռնվել է Հաճախորդի կողմից և ընդունվել է Ընկերության կողմից՝ գրավոր ծանուցմամբ, կամ
- այն օրը, երբ Ընկերությունը դադարեցնում է խորհրդատվական ծառայությունների մատուցումը՝ սույն Կանոններին համապատասխան:

6.2.6.4. Եթե Ներդրումային խորհրդատվական ծառայությունը վաղ դադարեցվում է՝ համաձայնեցված նվազագույն ժամկետից առաջ, Հաճախորդը ընդունում և համաձայնում է, որ Ընկերությունը կարող է կիրառել «clawback» դրույթներ: Վերջիններս կարող են ներառել՝ մնացորդային նվազագույն

ժամկետին համադրելի ամբողջ խորհրդատվական վճարի վճարում, կամ նախկինում մատուցված ծառայությունների վերագնահատում՝ ըստ ստանդարտ սակագների (կախված նրանից, թե որն է ավելի բարձր): Նման ճշգրտումները կատարվում են Սակագներում սահմանված մեթոդաբանությամբ:

6.2.6.5. Բոլոր չվճարված խորհրդատվական վճարները, ներառյալ՝ վաղ դադարեցման ճշգրտումներից բխողները, դառնում են անհապաղ վճարման ենթակա ծառայության դադարեցման պահին և գանձվում են Հաճախորդի հաշվից, եթե կողմերը այլ բան չեն համաձայնեցրել:

6.3. Պորտֆելի կառավարում

6.3.1. Պորտֆելի կառավարումը նշանակում է Հաճախորդի Ակտիվների անձնական, շարունակական և դիսկրետ կառավարում՝ համաձայն Հաճախորդի հետ համաձայնեցված ներդրումային պարամետրերի: Ծառայությունները մատուցվում են բացառապես Հաճախորդի սեփական հաշվին:

6.3.2. Պորտֆելի կառավարման ծառայությունները ակտիվացվում են Ծառայության փոփոխության դիմումի (Հավելված 3) ներկայացումից հետո, որտեղ Հաճախորդը հայտագրում է իր ցանկությունը ստանալու տվյալ ծառայությունը՝ միաժամանակ լրացնելով համապատասխանության և հարմարության հարցաշարը (Հավելված 3Ա): Վերջինում ներկայացված տեղեկատվությունը՝ ներառյալ Հաճախորդի ներդրումային նպատակները, ռիսկի հանդուրժողականությունը, ներդրումային հորիզոնը և սահմանափակումները, կազմում է ներդրումային հայտարարագիրը, որը հանդիսանում է դիսկրետ Պորտֆելի կառավարման հիմքը:

6.3.3. Ընդհանուր կանոններ.

- Ընկերությունը կառավարում է պորտֆելը ըստ համաձայնեցված ներդրումային հայտարարագրի:
- Ընկերությունը կարող է, անհրաժեշտության դեպքում, ներգրավել արտաքին կառավարիչների կամ միջնորդների և իրականացնել գործարքներ կարգավորվող կամ չկարգավորվող շուկաներում՝ իր անունից, սակայն Հաճախորդի հաշվին և ռիսկով:
- Ընկերությունը կարող է համատեղել Պորտֆելի կառավարման ծառայությունները այլ ծառայությունների հետ, եթե դա բխում է Հաճախորդի շահերից:
- Ընկերությունը չի դառնում Հաճախորդի Ակտիվների սեփականատեր և չի երաշխավորում Պորտֆելի եկամտաբերությունը:
- Հաճախորդը կարող է ցանկացած պահի դիմել ներդրումային հայտարարագրում փոփոխություններ կատարելու համար, և այդ փոփոխությունները ուժի մեջ են մտնում՝ Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով համաձայնեցումից հետո:

6.3.4. Եթե կողմերի միջև այդպես է համաձայնեցվել, ապա ներդրումային հայտարարագիրը կարող է ներառել Իմաստալից հենանիշներ, որոնք օգտագործվում է Պորտֆելի արդյունավետությունը գնահատելու համար: Իմաստալից հենանիշները պետք է լինեն օբյեկտիվ, արտաքին և Ընկերությունից անկախ:

6.3.5. Հաճախորդը կարող է պահանջել Ակտիվների մասնակի կամ ամբողջական դուրսբերում կառավարվող Պորտֆելից՝ նախապես ծանուցելով Ընկերությանը Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով: Ընկերությունը իրականացնում է նման պահանջները տրամաբանական ժամկետում, հաշվի առնելով շուկայի վիճակը և իրացվելիության սահմանափակումները: Հաճախորդը ընդունում է, որ վաղ դուրսբերումը կարող է հանգեցնել կորուստների կամ լրացուցիչ ծախսերի, որոնց

համար Ընկերությունը պատասխանատվություն չի կրում: Ակտիվների ամբողջական դուրսբերումը ավտոմատ կերպով հանգեցնում է Պորտֆելի կառավարման ծառայության դադարեցմանը՝ վերջնական հաշվարկի ավարտից հետո:

6.3.6. Վճարներ, հաշվարկման շրջան և վաղ դադարեցում

6.3.6.1. Պորտֆելի կառավարման ծառայությունները ենթակա են կառավարման վարձատրության, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում, արդյունքներից կախված վարձատրության՝ երկուսն էլ հաշվարկվում են կառավարվող Ակտիվների հիման վրա և Սակագներին համապատասխան, որոնքը սույն Կանոնների անբաժանելի մասն է կազմում: Հաշվարկման մեթոդաբանությունը, ներառյալ՝ եկամտաբերության Իմաստալից հենանիշերը և արդյունքների ամրագրման (crystallisation) պարբերականությունը, սահմանվում են Սակագներում:

6.3.6.2. Կառավարման վարձատրության հաշվարկը սկսվում է այն օրվանից, երբ Պորտֆելի կառավարման ծառայությունը ակտիվացվում է, այսինքն՝ այն օրը, երբ Հաճախորդի Ծառայության փոփոխության դիմումը հաստատվում է և Ընկերությունը ստանձնում է պորտֆելի դիսկրետ կառավարումը: Վճարները կուտակվում են համամասնորեն (pro rata)՝ ամբողջ ծառայության ընթացքում՝ ելնելով կառավարման ներքո գտնվող Ակտիվների օրական կամ ամսական արժեքից, ինչպես նախատեսված է Սակագներում:

6.3.6.3. Վճարների հաշվարկը շարունակվում է մինչ ավելի շուտ տեղի ունեցող հետևյալ իրադարձություններից որևէ մեկը.

- այն օրը, երբ Հաճախորդը դադարեցնում է Պորտֆելի կառավարման ծառայությունը՝ ներկայացնելով դուրսբերման կամ դադարեցման ծանուցում, որը ընդունվել է Ընկերության կողմից, կամ
- այն օրը, երբ Ընկերությունը դադարեցնում է Պորտֆելի կառավարման ծառայությունների մատուցումը՝ սույն Կանոններին համապատասխան:

6.3.6.4. Եթե Պորտֆելի կառավարման ծառայությունը վաղ դադարեցվում է՝ մինչև համաձայնեցված նվազագույն ժամկետի ավարտը, Հաճախորդը ընդունում և համաձայնում է, որ Ընկերությունը կարող է կիրառել «clawback» դրույթներ: Վերջիններս կարող են ներառել՝ նվազագույն ժամկետին համադրումով ամբողջ տարվա կառավարման վարձատրության վճարում, կամ նախկինում մատուցված ծառայությունների վերագնահատում՝ ըստ ստանդարտ Սակագների (կախված նրանից, թե որն է ավելի բարձր): Այն դեպքերում, երբ կիրառվում է արդյունքներից կախված վարձատրություն, այն կարող է հաշվարկվել և գանձվել համաչափ հիմունքներով՝ մինչև Պայմանագրի լուծման օրը, ներառյալ՝ մինչ այդ ամրագրված (crystallised) արդյունքները:

6.3.6.5. Ծառայության դադարեցման պահին բոլոր չվճարված կառավարման վարձատրությունները, արդյունքներից կախված վարձատրությունները կամ հետվերադարձի ճշգրտումները (clawback adjustments) համարվում են անմիջապես ենթակա վճարման և կարող են գանձվել Հաճախորդի ներդրումային հաշվից՝ առանց լրացուցիչ հրահանգի, եթե այլ պայմանավորվածություն չի կնքվել:

6.4. Ձերաշխավորված տեղաբաշխում

6.4.1. Չերաշխավորված տեղաբաշխման ծառայությունների շրջանակում Ընկերությունը կարող է Հաճախորդին (թողարկողին) տրամադրել հետևյալ ծառայություններից մեկը կամ մի քանիսը՝

- Օգնություն արժեթղթերի ազդագրի պատրաստման և դրա ԿԲ-ում գրանցման գործընթացի աջակցության հարցում,
- Հնարավոր ներդրողների նույնականացման և ներգրավման իրականացում՝ անհատական հանդիպումների կամ road show-ների կազմակերպման միջոցով,
- Գովազդային և մարքեթինգային միջոցառումների իրականացում,
- Արժեթղթերի ցուցակման (առևտրի թույլտվության) գործընթացի նախաձեռնում՝ կարգավորվող շուկայում,
- Օրենքով սահմանված հաշվետու թողարկողների տեղեկատվության հրապարակման գործընթացի կազմակերպում:

6.4.2. Ընկերությունը ձեռնարկում է իրենից կախված բոլոր ողջամիտ միջոցները՝ ապահովելու Արժեթղթերի թողարկման ամբողջական տեղաբաշխումը, սակայն չի երաշխավորում դրա լիարժեք իրականացումը և չի պարտավորվում ձեռք բերել չտեղաբաշխված մասը, եթե տեղաբաշխումը կատարվում է ոչ ամբողջ ծավալով:

6.4.3. Տեղաբաշխման շրջանակում մատուցվող ծառայությունների ծավալը և առանձնահատկությունները համաձայնեցվում են Ընկերության և Հաճախորդի միջև՝ Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով:

6.4.4. Չերաշխավորված տեղաբաշխման ծառայությունները կարող են վերաբերվել ինչպես հանրային առաջարկներին, այնպես էլ փակ (մասնավոր) տեղաբաշխումներին: Ծառայությունների ծավալը և կիրառելի իրավական դաշտը սահմանվում են տեղաբաշխման հավելյալ պայմանագրով, որը կնքվում է Ընկերության և Հաճախորդի միջև:

6.5. Դիլերային ծառայություններ

6.5.1. Ընկերությունը կարող է մատուցել ներդրումային ծառայություններ՝ մտնելով ֆինանսական գործիքներով գործարքների մեջ որպես հակակողմ Հաճախորդի նկատմամբ («գործարք սեփական հաշվով»): Այդ դեպքերում Ընկերությունը գներ է մեջբերում կամ առաջարկում Հաճախորդին և իրականացնում է գործարքներ ընդհանուր (all-inclusive) Սակագներով, որոնք կարող են ներառել Ընկերության մարժան կամ սպրեդը:

6.5.2. Գործելով որպես դիլեր՝ Ընկերությունը պարտավոր չէ գործել «լավագույն ջանքերի» սկզբունքով, ինչպես բրոքերային ծառայությունների դեպքում, սակայն պարտավոր է ապահովել, որ առաջարկվող պայմանները լինեն արդար, թափանցիկ և համապատասխան շուկայում գործող պայմաններին:

6.5.3. Հաճախորդը ճանաչում և ընդունում է, որ դիլերային հիմունքներով գործարքներ կնքելիս Ընկերությունը գործում է որպես հիմնական կողմ (principal) և ոչ թե որպես գործակալ (agent), և գործարքը իրականացվում է ուղղակիորեն Հաճախորդի և Ընկերության միջև:

7. Ոչ հիմնական ծառայությունների մատուցման կարգ

Ոչ հիմնական ծառայությունները կարող են մատուցվել առանց Ներդրումային հաշվի բացման, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ներառում են Հաճախորդի Ակտիվների վարում (ներառյալ՝ Արժույթի առքուվաճառքի գործարքները) կամ երբ պահանջվում են պահառության ծառայություններ, որոնց դեպքում Ներդրումային հաշիվը պարտադիր է:

7.1. Պահառության ծառայություններ (Արժեթղթերի պահպանում և կառավարում)

7.1.1. Պահառության ընդհանուր դրույթներ

7.1.1.1. Արժեթղթերը Պահառության հանձնելը չի հանգեցնում դրանց սեփականության իրավունքի փոխանցմանը Ընկերությանը:

7.1.1.2. Ընկերությունը ինքնուրույն որոշում է և ընտրում Արժեթղթերի Պահառության վայրերը՝ հետևելով սույն Կանոնների 13-րդ գլխով սահմանված կարգին:

7.1.1.3. Ընկերությունը Պահառության ծառայությունները մատուցում է Կանոնակարգ 33-ի պահանջներին համապատասխան՝ կիրառելով կրկնակի գրառման (ակտիվային և պասիվային հաշիվների) սկզբունքը:

7.1.2. Արժեթղթերի փոխանցման գործառնությունների տեսակները և դրանց կատարման առանձնահատկությունները

7.1.2.1. Ընկերությունը իրականացնում է փոխանցման գործառնություններ հետևյալ ձևերով՝ «Առաքում վճարման դիմաց» (Delivery versus Payment, DVP), և «Առաքում առանց վճարման» (Free-of-Payment Delivery, FOP)՝ Հաճախորդի Պատվերների և հակակողմի հանձնարարականների հիման վրա:

7.1.2.2. Ընկերությունը կարող է կատարել նաև «ազատ առաքում» (Free Delivery)՝ Հաճախորդի Պատվերի հիման վրա: Այդ դեպքերում Հաճախորդը պարտավոր է ներկայացնել փաստաթղթեր, որոնք հիմնավորում են փոխանցման իրավական հիմքը (օրինակ՝ պայմանագիր, իրավաբանական որոշում կամ այլ իրավական ուժ ունեցող փաստաթուղթ), ինչպես նաև՝ Ընկերության կողմից ՀՀ օրենսդրությամբ պահանջվող լրացուցիչ փաստաթղթեր: Բացառություն է կազմում սույն Կանոնների 8.2-րդ կետով սահմանված դեպքը, երբ հիմքը հաստատող փաստաթուղթը պարտադիր չէ:

7.1.2.3. «Առաքում վճարման դիմաց» և «Առաքում առանց վճարման» փոխանցումների հակապատվերներում պարունակվող տեղեկատվությունը պետք է համընկնի, հակառակ դեպքում փոխանցումը մերժվում է:

7.1.2.4. Փոխանցման գործառնությունները կարող են հաշվարկվել պահանջների և պարտավորությունների զուտացման կամ հաշվանցման միջոցով, եթե նման ընթացակարգերը թույլատրելի են գործող օրենսդրությամբ և համապատասխան հաշվարկային համակարգերի կանոններով:

7.1.2.5. Փոխանցման Պատվերները ներկայացվում են Ընկերությանը Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով՝ Ընկերության կողմից Հաճախորդին տրամադրված ձևաչափով:

7.1.3. Պահառության ներքո հանձնված Արժեթղթերից բխող իրավունքների իրականացում, կուպոնների և շահութաբաժինների վճարում Հաճախորդին

7.1.3.1. Պահառության ծառայությունների շրջանակում Ընկերությունը՝ Հաճախորդի հանձնարարությամբ և անհրաժեշտ փաստաթղթերի (օրինակ՝ լիազորագրի) առկայությամբ, նպաստում է Հաճախորդի Արժեթղթերից բխող իրավունքների իրականացմանը (ներառյալ՝ քվեարկություն, բաժանորդագրություն և այլ իրավունքներ): Ընկերությունը նման իրավունքներ չի իրականացնում առանց Հաճախորդի հանձնարարության:

7.1.3.2. Հաճախորդը պատասխանատու է այն բացասական հետևանքների համար, որոնք կարող են առաջանալ՝ Ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերի չներկայացման պատճառով՝ սույն Կանոնների 7.1.3.1. ենթակետի համաձայն:

7.1.3.3. Ընկերությունը Հաճախորդի Ներդրումային հաշվին է մուտքագրում թողարկողների կամ նրանց վճարող գործակալների կողմից փաստացի ստացված եկամուտները (շահաբաժիններ, կուպոնային վճարումներ, մարման գումարներ կամ այլ մուտքեր): Ընկերությունը պատասխանատվություն չի կրում թողարկողների, գրանցողների, վճարող գործակալների, դեպոզիտարիաների

կամ այլ երրորդ անձանց գործողությունների կամ անգործության համար, ներառյալ՝ ուշացումները, մասնակի վճարումները կամ պահումները (օրինակ՝ հարկեր, միջնորդավճարներ): Այդ եկամուտները այն դեպքում, երբ վճարվում են այնպիսի արժույթով, որը չի կարող անմիջապես փոխանցվել Հաճախորդին, Ընկերությունը դրանք փոխարկում է այլ արժույթի՝ Հաճախորդի հետ փոխադարձ համաձայնությամբ և օգտագործելով փոխանցման օրվա դրությամբ ԿԲ-ի կողմից սահմանված Արտարժույթի փոխարժեքը:

7.1.3.4. Պահառության ծառայության շրջանակում Ընկերությունը կազմակերպում է տեղեկատվության և փաստաթղթերի փոխանակումը թողարկողի կամ այլ պահառուի (ներառյալ՝ կենտրոնացված դեպոզիտարիայի կամ օտարերկրյա պահառուի) և Հաճախորդի միջև: Սա ներառում է՝ թողարկողի կամ պահառուի կողմից Հաճախորդին տրամադրվող փաստաթղթերը, և Հաճախորդի կողմից թողարկողին կամ պահառուին տրամադրվող փաստաթղթերը՝ Արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով:

7.2. Արժեթղթերի թողարկման հետ կապված ծառայություններ

7.2.1. Բացի Կանոնների 6.4-րդ ենթակետում նկարագրված տեղաբաշխման ծառայություններից, Ընկերությունը կարող է մատուցել նաև Ոչ հիմնական ծառայություններ, որոնք առնչվում են Արժեթղթերի թողարկման գործընթացին: Նման ծառայությունները կարող են ներառել կառուցվածքային խորհրդատվություն, նախագծի համակարգում, կապ հաստատում կարգավորիչ մարմինների հետ, և այլ օժանդակ աջակցություն, որը չի համարվում տեղաբաշխում Օրենքի իմաստով:

7.2.2. Նման ծառայությունների ծավալը, ընթացակարգերը, ժամկետները և Սակագները համաձայնեցվում են Հաճախորդի հետ՝ Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով:

7.3. Գործարքների կատարման ապահովման նպատակով վարկի/փոխառության տրամադրում

7.3.1. Ընկերությունը, իր հայեցողությամբ, կարող է Հաճախորդին տրամադրել Ակտիվներ՝ վարկի կամ փոխառության ձևով, երբ Հաճախորդի ներդրումային հաշվին առկա միջոցները բավարար չեն ֆինանսական գործիքների գործարքներ կատարելու համար, և Ընկերությունը հանդիսանում է տվյալ գործարքի կողմ: Նման ծառայությունը մատուցվում է որպես Ոչ հիմնական ծառայություն, Օրենքի պահանջներին համապատասխան:

7.3.2. Ընկերությունը պարտավոր չէ տրամադրել վարկ կամ փոխառություն: Ընկերությունը կարող է մերժել տրամադրումը՝ հիմնվելով իրացվելիության պակասի կամ այլ պատճառների վրա՝ առանց պատճառաբերման պարտավորության:

7.3.3. Հաճախորդը պարտավոր է տրամադրել Ընկերությանը ապահովում (գրավ)՝ Ակտիվների տեսքով: Ապահովման ծավալը, տեսակը և սահմանաչափերը որոշվում են Ընկերության և Հաճախորդի միջև կնքվող հավելյալ պայմանագրով՝ Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով:

7.3.4. Ընկերությունը վարկի դիմաց գանձում է տոկոսադրույք, որի չափը սահմանվում է համապատասխան Սակագներով կամ կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Ընդհանուր տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի առավելագույնը:

7.3.5. Վարկի տրամադրման օրը տոկոս չի հաշվարկվում:

7.3.6. Եթե կողմերը այլ բան չեն համաձայնեցրել, ապա Հաճախորդը պարտավոր է մարել վարկը և կուտակված տոկոսները՝ հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում՝ վարկի տրամադրման օրվանից: Վճարման պարտավորությունները չկատարելու դեպքում Ընկերությունն իրավունք ունի իր իրավունքները իրացնել ապահովման նկատմամբ՝ առանց դատական կարգի, ՀՀ օրենսդրության համաձայն: Եթե ապահովումը

բավարար չէ, ապա մնացորդային պարտավորությունը կարող է գանձվել Հաճախորդի Ներդրումային հաշվից՝ առանց համաձայնության:

7.4. Գործարար խորհրդատվական ծառայություններ

7.4.1. Գործարար խորհրդատվության շրջանակում Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է խորհրդատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝ իրավաբանական անձանց կապիտալի կառուցվածք, կորպորատիվ ռազմավարություն, միաձուլումներ և ձեռքբերումներ, ընկերության վերակազմակերպում:

7.4.2. Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանները (ներառյալ՝ ծավալը և արժեքը) համաձայնեցվում են Ընկերության և Հաճախորդի միջև՝ Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով:

7.4.3. Հաճախորդը պատասխանատու է այն բացասական հետևանքների համար, որոնք կարող են առաջանալ՝ Ընկերությանը անհրաժեշտ տեղեկատվություն չտրամադրելու հետևանքով:

7.5. Հետազոտությունների, վերլուծությունների և ընդհանուր ներդրումային առաջարկությունների մշակում և տարածում

7.5.1. Ընկերությունը կարող է մշակել և տարածել՝ ֆինանսական շուկայի հետազոտություններ, վերլուծություններ, ընդհանուր ներդրումային առաջարկություններ, այլ վերլուծական և/կամ մարքեթինգային նյութեր:

7.5.2. Նշված նյութերը նախատեսված են միայն ընդհանուր տեղեկատվական նպատակների համար և չեն համարվում անձնական Ներդրումային խորհրդատվություն՝ սույն Կանոնների, ՀՀ օրենսդրության կամ այլ իրավական ակտերի իմաստով: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում այն ներդրումային որոշումների համար, որոնք Հաճախորդը կարող է կայացնել՝ հիմնվելով նման նյութերի վրա:

7.6. Արժույթի առքուվաճառքի գործարքների իրականացում

7.6.1. Ընկերությունը իրականացնում է ոչ-կանխիկ Արժույթի առքուվաճառքի գործարքներ՝ որպես Ներդրումային ծառայությունների մաս՝ հետևյալ տարբերակներով՝

- Ուղղակիորեն՝ Ընկերության առևտրային սեղանի (Trade desk) միջոցով, որտեղ Ընկերությունը հանդես է գալիս որպես գործարքի կողմ (հակակողմ), կամ
- Երրորդ կողմերի առևտրային հարթակներով, որտեղ Ընկերությունը հանդես է գալիս որպես բրոքեր / միջնորդ՝ առանձին պայմանագրի հիման վրա:

7.6.1.1. Իրականացում՝ Ընկերության առևտրային սեղանի միջոցով

- Արժույթի բոլոր գործարքները իրականացվում են Ընկերության կողմից՝ որպես հակակողմ (principal):
- Հաճախորդի Պատվերը կատարվում է ընդհանուր փոխարժեքով, որը արտացոլում է շուկայական պայմանները և ներառում է Ընկերության մարժան:
- Նման գործարքների համար առանձին միջնորդավճար չի գանձվում, քանի որ Ընկերության վարձատրությունը ներառված է փոխարժեքի մեջ:
- Վերջնահաշվարկը իրականացվում է Հաճախորդի Ներդրումային հաշվով:

7.6.1.2. Իրականացում՝ առևտրային հարթակների միջոցով

- Երրորդ կողմերի էլեկտրոնային հարթակներով իրականացվող արժութային գործարքները կատարվում են բրոքերային հիմունքներով, առանձին պայմանագրի և հատուկ սակագնային կառուցվածքի հիման վրա:
- Վճարների, միջնորդավճարների և այլ ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը Հաճախորդին բացահայտվում է գործարքից առաջ՝ համապատասխան պայմանագրով:
- Վերջնահաշվարկը կատարվում է Հաճախորդի Ներդրումային հաշվով:

7.6.2. Կատարման կանոններ

- Արժութային բոլոր գործարքները իրականացվում են Հաճախորդի կողմից ներկայացված Արտարժույթի Պատվերի հիման վրա՝ Ընկերության սահմանած ձևաչափով:
- Արտարժույթի Պատվերները ներկայացվում են Ընկերության և Հաճախորդի միջև համաձայնեցված Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով:
- Հաճախորդը կարող է ներկայացնել, փոփոխել կամ հետ վերցնել Արտարժույթի Պատվերները՝ սույն Կանոնների համաձայն:
- Արտարժույթի գործարքները կարող են կատարվել միայն այն չափով, որքանով Հաճախորդի Ներդրումային հաշվին առկա են բավարար դրամական միջոցներ՝ Պատվերը ներկայացնելու պահին:

8. Հաճախորդի Ակտիվների պահպանումն ու վերադարձը

8.1. Հաճախորդի՝ Ընկերության տիրապետման տակ գտնվող Ակտիվների պաշտպանությունն ապահովելու նպատակով Ընկերությունը՝

8.1.1. վարում է գրառումներ և հաշիվներ այնպիսի ձևով, որը ցանկացած պահի թույլ է տալիս տարանջատել յուրաքանչյուր Հաճախորդի Ակտիվները՝ մյուս Հաճախորդների Ակտիվներից, ինչպես նաև՝ Ընկերության սեփական Ակտիվներից,

8.1.2. ապահովում է տեղեկատվության, հաշիվների վարման և հաշվառման ճշգրտությունն ու համապատասխանությունը՝ Հաճախորդի այն Ակտիվներին, որոնք փաստացի փոխանցվել են իր տիրապետմանը և/կամ կառավարմանը,

8.1.3. պարբերաբար իրականացնում է համեմատումներ և ճշգրտումներ՝ իր տիրապետման տակ գտնվող Հաճախորդի Ակտիվների հաշվների, տեղեկությունների ու գրառումների և այդ Ակտիվները պահող երրորդ կողմերի տվյալների միջև, ինչպես նաև՝ Հաճախորդի Ներդրումային հաշիվների մնացորդների, մուտքերի և ելքերի համապատասխանեցում,

8.1.4. ապահովում է, որ ցանկացած երրորդ անձի կողմից պահվող Հաճախորդի Արժեթղթերը հնարավոր լինի տարանջատել ինչպես Ընկերության, այնպես էլ տվյալ երրորդ անձի Արժեթղթերից,

8.1.5. ձեռնարկում է անհրաժեշտ կազմակերպական-կառավարական միջոցառումներ՝ նվազեցնելու Հաճախորդի Ակտիվների կամ դրանց հետ կապված իրավունքների կորստի ռիսկը՝ խարդախության, չթույլատրված օգտագործման, անկատար հաշվառման կամ անփութության հետևանքով:

8.2. Ընկերությունը ինքնուրույն է ընտրում Հաճախորդի Ակտիվների պահման վայրերը՝ հաշվի առնելով արդյունավետությունն ու Հաճախորդի նախապատվությունները: Հաճախորդը կարող է հանձնարարել Ընկերությանը տեղափոխել իր Ակտիվները՝ Ընկերության Անվանատիրոջ հաշիվներից և այլ՝ հաճախորդների Ակտիվների կառավարման համար նախատեսված հաշիվներից դեպի իր սեփական արժեթղթերի կամ բանկային հաշիվները՝ համապատասխան Պատվերի ներկայացմամբ: Սույն կետով նախատեսված Պատվերները մշակվում են հնարավորինս կարճ ժամկետում: Արժեթղթերի փոխանցման Պատվերը ներկայացվում է «ազատ առաքում» (Free Delivery) ձևով, իսկ դրամական միջոցների փոխանցման Պատվերը՝ Ընկերության կողմից սահմանված ստանդարտ ձևով:

8.3. Հաճախորդը տալիս է իր նախնական գրավոր համաձայնությունը, որով լիազորում է Ընկերությանը տիրապետելու և օգտագործելու Հաճախորդի Ակտիվները՝ Ընկերության գործառնական պրակտիկային համապատասխան ձևերով: Նման ձևերը ներառում են, բայց չեն սահմանափակվում՝ Հաճախորդի ակտիվների փոխանցմամբ կամ նշանակմամբ Ընկերության շահի համար, դրանց ներդրմամբ որպես ավանդ, օգտագործմամբ գրավի ձևով, կամ այլ ցածր ռիսկայնությամբ ֆինանսական գործիքների մեջ ներգրավմամբ, այն պայմանով,

որ նման գործողությունները կատարվեն ՀՀ գործող օրենսդրության և կանոնակարգերի պահանջներին համապատասխան: Հաճախորդը ճանաչում և ընդունում է, որ Ընկերության կողմից Ակտիվների նման օգտագործումը կամ տեղաբաշխումը կարող է լինել ժամանակավոր բնույթի, կամ ուղղակիորեն կապված Հաճախորդի գործարքների իրականացման, վերջնահաշվարկի կամ պահառության գործընթացների հետ: Ընկերությունը կարող է ստանալ կամ պահպանել ցանկացած եկամուտ, ներառյալ տոկոսները կամ այլ ֆինանսական առավելությունները, որոնք առաջանում են նման տեղաբաշխումների արդյունքում, եթե այլ գրավոր համաձայնություն չի ձեռք բերվել: Ընկերությունը պարտավորվում է ապահովել, որ նման տեղաբաշխումները չվնասեն Հաճախորդի իրավունքին՝ ստանալու իր Ակտիվների ամբողջական և ժամանակին վերադարձը, ինչպես նաև պարտավորվում է պահպանել բոլոր օգտագործված Հաճախորդի Ակտիվների մանրամասն և տարանջատված հաշվառումը և գործել ՀՀ օրենսդրության պահանջներին լիովին համապատասխան: Սույն դրույթը չի փոփոխում Ընկերության պարտավորությունները՝ ապահովելու և վերադարձնելու Հաճախորդի Ակտիվները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաճախորդը կարող է դադարեցնել իր համաձայնությունը ցանկացած պահին՝ Ընկերությանը գրավոր ծանուցում տրամադրելով:

8.4. Ընկերությունը պատշաճ խստությամբ ընտրում է երրորդ կողմ հանդիսացող կազմակերպություններին, ինչպիսիք են բանկերն ու դեպոզիտարիաները,՝ Հաճախորդների Ակտիվների անվտանգ պահպանում ապահովելու նպատակով՝ խստորեն հետևելով սույն Կանոնների 13-րդ գլխում սահմանված չափանիշներին:

8.5. Հաճախորդի Ակտիվների տիրապետման ողջ ընթացքում (այդ թվում՝ դրանց օգտագործման դեպքում Ընկերության սեփական շահի համար) Ընկերությունը խստորեն պահպանում է ՀՀ օրենսդրության պահանջները:

8.6. Ակտիվների վերադարձ և հաշվի փակումը

8.6.1. Պայմանագրի դադարեցման կամ Հաճախորդի Ներդրումային հաշվի(ների) փակման դեպքում Ընկերությունը վերադարձնում է Հաճախորդի բոլոր Ակտիվները՝ Հաճախորդի կամ նրա ներկայացուցչի կողմից նշված հաշիվներին՝ օրենքով և հաշվարկային ընթացակարգերով սահմանված կարգով, ինչպես նաև՝ Հաճախորդի՝ Ընկերության հանդեպ չկատարված պարտավորությունների ավարտից հետո:

8.6.2. Դրամական միջոցների վերադարձը իրականացվում է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում՝ Պայմանագրի դադարեցումից կամ փոխանցման ամբողջական հանձնարարականի ստացումից հետո՝ կախված նրանից, որը տեղի է ունենում ավելի ուշ: Ընկերությունը իրավունք ունի Հաճախորդի միջոցներից պահել փոխանցման հետ կապված բոլոր վճարները, ծախսերը և տուրքերը:

8.6.3. Հաճախորդի անունից պահվող Արժեթղթերը փոխանցվում է Հաճախորդի կողմից նշված հաշիվ(ներ)ին՝ կապված դեպոզիտարիայի/վերջնահաշվարկային համակարգի կանոններին և ժամկետներին համապատասխան: Ընկերությունը իրավունք ունի Հաճախորդի միջոցներից պահել երրորդ անձանց կողմից գանձվող վճարները կամ տուրքերը, որոնք վերաբերում են այդ Արժեթղթերի փոխանցմանը:

8.6.4. Եթե ընդհանուր բանկային/փոխանցման ծախսերը գերազանցում են Հաճախորդի Ներդրումային հաշվում մնացած դրամական միջոցների մնացորդը, ապա մնացորդը զրոյացվում է, և Ներդրումային հաշիվը համարվում է փակված՝ առանց Ընկերության կողմից հետագա պարտավորությունների:

8.6.5. Եթե Պայմանագրի դադարեցումից հետո մինչև ողջամիտ ժամկետ Հաճախորդը չի տրամադրում փոխանցման ճիշտ և ամբողջական տվյալներ, Ընկերությունն իրավունք ունի պահել Ակտիվները պահառության մեջ՝ Հաճախորդի հաշվին, մինչև համապատասխան հանձնարարականի ստացումը:

8.7. Հաճախորդի Ակտիվների պահման, օգտագործման և վերադարձի բոլոր գործողությունները իրականացվում են խիստ համապատասխանությամբ ՀՀ օրենսդրությանը, ՀՀ ԿԲ կիրառելի կանոնակարգերին և պահառության ու վերջնահաշվարկի միջազգային լավագույն փորձին:

8.8. Հաշվի բացում և ներկայացուցչություն

8.8.1. Ֆիզիկական անձինք

Ֆիզիկական անձ հանդիսացող Հաճախորդների համար Ներդրումային հաշիվը կարող է բացվել, և պայմանագրային փաստաթղթերը կարող են ստորագրվել՝ ինքնուրույն՝ Հաճախորդի կողմից, կամ պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչի կողմից՝ լիազորագրի հիման վրա: Նման լիազորագիրը պետք է կազմվի բնօրինակի ձևով և պատշաճ կերպով նոտարացվի, իսկ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս տրված լինելու դեպքում՝ պետք է ապոստիլավորվի կամ օրինականացվի՝ կիրառելի օրենսդրության պահանջներին համապատասխան: Ընկերությունը պահպանվում է այն իրավունքը, որպեսզի լիազորված անձի կողմից ներկայացված հաշվի բացման հրահանգները ընդունելուց առաջ պահանջի Հաճախորդից ուղիղ հաստատում կամ լրացուցիչ փաստաթղթեր:

8.8.2. Իրավաբանական անձինք

Իրավաբանական անձ հանդիսացող Հաճախորդների համար Ներդրումային հաշիվը կարող է բացվել, և պայմանագրային փաստաթղթերը կարող են ստորագրվել՝

- Հաճախորդի տնօրենի կամ գործադիր տնօրենի (գործադիր մարմնի) կողմից՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում (կամ օտարերկրյա համարժեք մարմնում) գրանցված կարգով, կամ
- այն անձի կողմից, որը Հաճախորդի կանոնադրությամբ կամ պաշտոնական գրանցման տվյալներով հստակորեն լիազորված է ներկայացնելու Հաճախորդին և կնքելու պարտավորեցնող գործարքներ, կամ
- պատշաճ կերպով լիազորված ներկայացուցչի կողմից՝ լիազորագրով, որը ստորագրված է տնօրենի կամ Գործադիր տնօրենի (գործադիր մարմնի) կամ կանոնադրությամբ և գրանցումներով ներկայացուցչության իրավասություն ունեցող այլ անձի կողմից:

Լիազորագիրը պետք է հստակ վերապահի Ներդրումային հաշիվ բացելու և Ընկերության հետ պայմանագրեր ստորագրելու իրավունքները և ներկայացվի հետևյալ ձևերից մեկով.

- բնօրինակ,
- պատշաճ կերպով նոտարիալ վավերացված և, անհրաժեշտության դեպքում, ապոստիլավորված կամ օրինականացված պատճեն, կամ
- Հաճախորդի տնօրենի կամ Գործադիր տնօրենի կամ կանոնադրությամբ ու գրանցումներով ներկայացուցչության իրավասություն ունեցող այլ անձի կողմից հաստատված պատճեն:

Ընկերությունն իրավունք ունի պահանջելու լիազորագրի նոտարիալ վավերացում կամ օրինականացում, եթե դա անհրաժեշտ է համարված համապատասխանության կամ ռիսկերի կառավարման նպատակներով:

8.9. Հաշվի փակման կարգը

Հաճախորդի Ներդրումային Հաշվի փակումը և Պայմանագրի դադարեցումը կարող են նախաձեռվել՝

- Ընկերության կողմից՝ սույն Կանոններով կամ ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, ներառյալ, բայց չսահմանափակվելով ոչ ակտիվ հաշվի դեպքում, ՓԼԱՖ պահանջների չկատարելու դեպքում, կամ
- Հաճախորդի կողմից՝ գրավոր կամ էլեկտրոնային դիմումի ներկայացմամբ՝ Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով, նշելով Պայմանագիրը

դադարեցնելու և Ներդրումային Հաշիվը փակելու մտադրությունը: Այդ դիմումը ստանալուց հետո Ընկերությունը երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է հաշվի փակման գործընթացի մեկնարկը և տեղեկացնում Հաճախորդին բոլոր չկատարված պարտավորությունների, վճարների կամ անհրաժեշտ փաստաթղթերի մասին:

Հաշվի փակումը ուժի մեջ է մտնում, երբ՝

- Հաճախորդի բոլոր պարտավորությունները Ընկերության նկատմամբ ամբողջությամբ կատարված են;
- Հաճախորդի բոլոր Ակտիվները պատշաճ կերպով փոխանցվել կամ դուրս են բերվել, և
- Կատարված են օրենքով սահմանված պահպանման և հաշվետվության բոլոր պահանջները:

Փակման գործընթացի ավարտից հետո Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է Հաշվի փակման ծանուցագիր՝ համաձայն Հավելված 2.5-ի, ինչպես նաև վերջնական հաշվետվություն և հաշվեկշիռ, որոնք հաստատում են բոլոր գործարքներն ու մնացորդային դիրքերը տվյալ փակման օրվա դրությամբ:

9. Գործողություն լիազորված անձի միջոցով

9.1. Սույն Կանոնների 8.8-րդ կետի համաձայն Ներդրումային հաշվի պատշաճ բացումից հետո Հաճախորդը կարող է իր իրավունքներն ու լիազորությունները իրականացնել լիազորված անձի միջոցով:

9.2. Երրորդ անձին լիազորելու համար Հաճախորդը պարտավոր է Ընկերությանը ներկայացնել լիազորագիր, որը կազմվում է Հավելված 4-ում սահմանված ձևով կամ Ընկերության կողմից ընդունելի այլ ձևաչափով: Լիազորագիրը պետք է հստակ պարունակի՝ լիազորված անձի լիազորությունների ծավալը, դրանց տևողությունը և սահմանափակումները:

9.3. Լիազորված անձի կողմից տրված լիազորությունների շրջանակում կատարված բոլոր գործողությունները համարվում են Հաճախորդի գործողություններ: Նման գործողություններից բխող բոլոր իրավունքներն ու պարտավորությունները վերապահվում են բացառապես Հաճախորդին, անկախ նրանից՝ գոյություն ունի արդյոք Ընկերության և լիազորված անձի միջև որևէ իրավական հարաբերություն:

9.4. Հաճախորդը կրում է լիարժեք պատասխանատվություն լիազորված անձի գործողությունների կամ անգործության համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած կորուստների կամ վնասների համար, եթե նման հետևանքները առաջացել են լիազորված անձի գործողությունների կամ անգործության արդյունքում և Ընկերությունը գործել է բարեխղճորեն և ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

9.5. Լիազորագրի հետկանչը ուժի մեջ է մտնում Ընկերության նկատմամբ միայն այն դեպքում, երբ դրա վերաբերյալ գրավոր ծանուցումն ու լիազորագրի հետկանչի պատճենը պատշաճ ձևով փոխանցվել են Ընկերությանը: Մինչ այդ ծանուցման ստացումը Ընկերությունը իրավունք ունի շարունակել առաջնորդվել գործող լիազորագրով՝ այն համարելով վավեր:

10. Շահերի բախման կանխարգելման և հաղթահարման քաղաքականություն

10.1. Շահերի բախման կանխարգելում և հաղթահարում՝ Ընկերության և նրա ղեկավարների և/կամ աշխատակիցների միջև

10.1.1. Ընկերության ղեկավարները և համապատասխան աշխատակիցները մշտապես վերանայում և գնահատում են իրենց և Ընկերության միջև շահերի բախման հնարավորությունը, իրենց հասանելի տեղեկատվության շրջանակներում:

10.1.2. Եթե Ընկերության ղեկավարը կամ որևէ այլ աշխատակից՝ սույն Կանոնների 10.1.1. ենթակետի համաձայն, պարզում է, որ առկա է կամ կարող է առաջանալ իր անձնական շահերի և Ընկերության շահերի բախում, ապա նա պարտավոր է այդ մասին ծանուցել Գործադիր տնօրենին:

10.1.3. Եթե Ընկերությանը չի հաջողվում կանխել ղեկավարների կամ այլ աշխատակիցների շահերի և Ընկերության շահերի բախումը, ապա առաջնահերթություն է տրվում Ընկերության շահերին:

10.2. Շահերի բախման կանխարգելում և հաղթահարում՝ Ընկերության և Հաճախորդի միջև

10.2.1. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցներն ու քայլերը՝ կանխելու Ընկերության և Հաճախորդի միջև շահերի հնարավոր բախումները, իսկ կանխումը անհնար լինելու դեպքում՝ պարտավորվում է դրանք նվազագույնի հասցնել:

10.2.2. Հնարավոր շահերի բախումները կանխելու նպատակով՝ Ընկերությունը խուսափում է այնպիսի գործարքներից, որոնք կարող են առաջացնել շահերի բախում, իսկ եթե խուսափելը հնարավոր չէ, ապա առաջնահերթություն է տալիս Հաճախորդի շահերին:

10.2.3. Ընկերությունը Հաճախորդի Պատվերները կատարում է առավել բարենպաստ պայմաններով՝ լիարժեքորեն հետևելով Պատվերների կատարման քաղաքականության դրույթներին:

10.2.4. Ընկերության ներդրումային առաջարկներում, գովազդային և տեղեկատվական նյութերում պետք է ներառվի նախազգուշացում հնարավոր շահերի բախումների վերաբերյալ:

10.2.5. Ընկերությունը երաշխավորում է իր բրոքերների և դիլերների լիազորությունների և գործառույթների տարանջատումը այն առևտրային հարթակներում և տերմինալներում, որտեղ այն իրականացնում է գործունեություն՝ ապահովելով, որ նրանց հրահանգներն ու գործարքները մնան գաղտնի և միմյանց համար տեսանելի չլինեն:

10.3. Շահերի բախման կանխարգելում և հաղթահարում՝ Հաճախորդների միջև

10.3.1. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցներն ու քայլերը՝ կանխելու Հաճախորդների միջև հնարավոր շահերի բախումները, իսկ կանխարգելումը անհնարին լինելու դեպքում՝ պարտավորվում է նվազագույնի հասցնել այդ բախումները:

10.3.2. Եթե Հաճախորդի և այլ հաճախորդների Պատվերները կարող են հանգեցնել շահերի բախման, ապա Ընկերությունը առաջնահերթություն է տալիս ավելի վաղ ներկայացված Պատվերին, միաժամանակ պահպանելով Պատվերների կատարման քաղաքականությամբ սահմանված մյուս պայմանները:

11. Պատվերների կատարման քաղաքականություն

11.1. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր ողջամիտ միջոցներն ու քայլերը՝ Պատվերները մշակելու առավել բարենպաստ պայմաններով Հաճախորդի համար և ապահովելու վերջինիս համար առավելագույն հնարավոր արդյունքը:

11.2. Հաճախորդի համար լավագույն պայմաններով Պատվերների կատարման նպատակով՝ Ընկերությունը հաշվի է առնում յուրաքանչյուր Պատվերի հետ կապված տարբեր գործոններ, այդ թվում՝ գինը, Հաճախորդի կրած ծախսերը, մշակման ժամանակը, պատշաճ և արագ կատարման հավանականությունը (ներառյալ՝ վերջնական հաշվարկի ճշգրտությունը), Պատվերի ընդհանուր ծավալը, նշված գործիքների բնութագրերը (օրինակ՝ դաս, տեսակ), Պատվերի բնույթը, Հաճախորդի հանձնարարականները, հաշվարկի վայրը և այլ տվյալներ, որոնք առնչվում են Պատվերի և դրա մշակման ընթացքին: Հաճախորդի՝ սույն կետում նշված հատուկ հանձնարարականներին համապատասխան Պատվերի կատարումը համարվում է Պատվերի կատարում լավագույն պայմաններով:

11.3. Շուկայական Պատվերները կատարվում են ներկայացման նույն աշխատանքային օրվա ավարտին, եթե շուկայում առկա են Պատվերով նշված Արժեթղթերը, Ածանցյալ ֆինանսական գործիքները կամ Արտարժույթը: Սահմանային Պատվերները (limit orders) կատարվում են միայն այն դեպքում, երբ նշված պայմանները կատարվում են: Եթե Հաճախորդի հետ գրավոր այլ բան չի համաձայնեցվել, ապա սահմանային Պատվերները ուժի մեջ են մինչև

ներկայացման օրվա ավարտը: Եթե մինչև այդ ժամկետը Պատվերը չի կատարվել, ապա այն համարվում է ժամկետանց (անվավեր):

11.4. Բացի սույն Կանոնների 11.2-րդ ենթակետով նշված գործոններից՝ Ընկերությունը Պատվերները լավագույն պայմաններով մշակելու նպատակով հաշվի է առնում նաև Հաճախորդի բնութագրերը, այդ թվում՝

- Հաճախորդի դասակարգումը՝ Պրոֆեսիոնալ կամ Ոչ պրոֆեսիոնալ,
- Պատվերների կատարման ընդհանուր ընթացակարգի վերաբերյալ Հաճախորդի հանձնարարականները,
- Հաճախորդի նախապատվությունները, և
- այլ տեղեկություններ, որոնք Ընկերության կարծիքով կարող են համարվել էական գործոններ:

11.5. Պատվեր մշակելիս Ընկերությունը ընտրում է գործարքի կնքման վայրը՝ ելնելով այն հաշվարկից, որ նվազագույնի հասցնի Հաճախորդի ընդհանուր ծախսերը, ներառյալ՝ Արժեթղթերի գինը և գործարքի հետ կապված այլ ծախսերը:

11.6. Լավագույն գնի պայմանների գնահատման ժամանակ Ընկերությունը հաշվի է առնում ոչ միայն տվյալ Պատվերով նախատեսված ֆինանսական գործիքի գնման կամ վաճառքի գինը, այլև՝ բոլոր միջնորդավճարները, տուրքերը և ծախսերը, որոնք Հաճախորդը կրում է Պատվերի կատարման արդյունքում:

11.7. Պատվերը համարվում է կատարված լավագույն պայմաններով, եթե Ընկերությունը այն փոխանցում է կատարման՝ սույն Կանոնների 13-րդ գլխով սահմանված չափանիշներով ընտրված Գործընկերոջը:

11.8. Ընկերությունը մշտապես վերահսկում է պատվերների կատարման գործընթացը՝ ապահովելու Պատվերների կատարման քաղաքականության պահանջներին համապատասխանությունը և լավագույն գործելակերպի սկզբունքներին հետևելը:

11.9. Պատվերների կատարման քաղաքականության պահպանումը չի բացառում Պատվերների կատարման հետ կապված ռիսկերը, որոնք մանրամասն ներկայացված են Հավելված 7-ում:

12. Տվյալների և տեղեկատվության բացահայտում

12.1. Ընկերության վերաբերյալ մանրամասն տեղեկությունները՝ նրա հասցեի, կապի միջոցների և գործունեության լիցենզիաների վերաբերյալ, ներկայացված են Հավելված 6-ում:

12.2. Ֆինանսական գործիքների և դրանցից յուրաքանչյուրի հետ կապված ռիսկերի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են Հավելված 7-ում:

12.3. Ներդրողների իրավունքների և լիազորությունների, ինչպես նաև նրանց օրինական շահերի պաշտպանության միջոցառումների և կառուցվածքային սկզբունքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 8-ում:

13. Դեպոզիտարիաների, բրոքերների և այլ Գործընկերների ընտրության չափանիշներ

13.1. Ընկերությունը սույն Կանոններով սահմանված ծառայությունների կամ դրանց մի մասի մատուցումը հանձնարարում է Գործընկերներին միայն այն դեպքում, երբ իր գնահատմամբ նման հանձնարարումը կնպաստի Հաճախորդին բարձր որակի ծառայություններ մատուցելուն:

13.2. Գործընկերների ընտրությունը կատարվում է ՀՀ օրենսդրությանը և սույն գլխով սահմանված չափանիշներին համապատասխան:

13.3. Գործընկերոջ գրանցումը, լիցենզավորումը, գործունեության թույլտվությունները և գործողությունները պետք է խստորեն համապատասխանեն նրա գրանցման երկրի օրենքներին և կանոններին:

13.4. Գործընկերոջ գործունեությունը պետք է իրականացվի իր գործունեության ոլորտում ընդունված միջազգային չափանիշներին և լավագույն պրակտիկային համապատասխան:

13.5. Գործընկերոջ ֆինանսական ցուցանիշները և գործունեության հաշվետվությունները (ներառյալ՝ ներդրումային գործունեությունը) պետք է արտացոլեն նրա արդյունավետ գործունեությունը:

13.6. Ընկերությունը պետք է ունենա հասանելիություն Գործընկերոջ գործունեության պատմության, հիմնական աշխատակիցների, խոշոր հաճախորդների և վարձատրության մեխանիզմների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը:

13.7. Եթե Գործընկերոջ գործունեությունը առնչվում է Պորտֆելի կառավարմանը կամ նմանատիպ ծառայություններին, ապա Ընկերությունը պետք է ունենա փաստաթղթային ապացույցներ, որ տվյալ Գործընկերոջ ներդրումային ռազմավարությունը արդյունավետորեն իրականացվել է որոշակի ժամանակահատվածում:

13.8. Գործընկերոջ ընտրությունն ու նրա հետ բիզնես հարաբերությունների հաստատումը կատարվում են Ընկերության ներքին կորպորատիվ ընթացակարգերին համապատասխան:

13.9. Գործընկերների կողմից Հաճախորդին տրամադրվող առևտրային հարթակները, տերմինալները և տեղեկատվական լուծումները մատուցվում են «Ինչպես կա»-սկզբունքով: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում նման համակարգերի խափանումների, թերությունների կամ դրանց հետևանքների համար:

13.10. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում այն վնասների համար, որոնք կարող են հասցվել Հաճախորդին այնպիսի Գործընկերների գործողությունների կամ անգործության հետևանքով, որոնք համապատասխանում են սույն գլխում սահմանված բոլոր չափանիշներին:

14. Ռիսկերի կանխարգելման միջոցառումներ

14.1. Ընկերությունը ներդնում և կիրառում է ամբողջական ռիսկերի կառավարման համակարգ, որը ներառում է նաև ներքին աուդիտի ընթացակարգեր, որոնք համապատասխանում են գործող օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի և միջազգային լավագույն պրակտիկայի պահանջներին:

15. Գաղտնիության քաղաքականություն

15.1. Ընկերությունը հավաքում և մշակում է Հաճախորդի անձնական տվյալները՝ սույն Կանոններով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված:

15.2. Ընկերությունը կարող է հավաքել Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն նաև ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի այլ աղբյուրներից:

15.3. Հաճախորդի անձնական տվյալների օգտագործումն ու մշակումը իրականացվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

15.4. Ընկերությունը լիազորված է Հաճախորդի անձնական տվյալները բացահայտելու իր աշխատակիցներին և/կամ Գործընկերներին, որոնք պարտավորվել են պահպանել այդ տեղեկատվության գաղտնիությունը, ինչպես նաև՝ պետական իրավասու մարմիններին:

15.5. Եթե Հաճախորդը օգտագործում է Ընկերության Գործընկերների տրամադրած կայքերը, առևտրային հարթակները կամ այլ էլեկտրոնային ռեսուրսներ, ապա նրա անձնական տվյալները ենթակա են տվյալ աղբյուրների և կայքերի գաղտնիության քաղաքականությանը:

15.6. Ընկերությունը իրականացնում է բոլոր անհրաժեշտ միջոցներն ու քայլերը՝ ապահովելու համար իր տիրապետության տակ գտնվող Հաճախորդի անձնական տվյալների անվտանգությունը:

16. Անցումային դրույթներ

16.1. Սույն Կանոնները հաստատվում են Ընկերության Գործադիր տնօրենի կողմից և ուժի մեջ են մտնում՝ դրանց Ընկերության պաշտոնական կայքում հրապարակման պահից:

16.2. Ընկերությունը իրավունք ունի միակողմանի կարգով փոփոխություններ և/կամ լրացումներ կատարել սույն Կանոններում: Նման փոփոխությունները ուժի մեջ են մտնում Հաճախորդի համար՝ դրանց Ընկերության պաշտոնական կայքում հրապարակման պահից, բացառությամբ

այն դեպքերի, երբ Հաճախորդը հրապարակումից կամ Ընկերության ուղիղ ծանուցում ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Ընկերությանը իր՝ Պայմանագիրը դադարեցնելու մտադրության մասին:

Հավելված 1	Դիմումի ձև
Հավելված 2	Ծանուցման ձև
Հավելված 3	Ծառայության փոփոխության դիմում
Հավելված 3Ա	Համապատասխանության և հարմարության հարցաթերթ և գնահատում
Հավելված 4	Լիազորագիր
Հավելված 5	Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ
Հավելված 6	Տեղեկատվություն Ընկերության մասին
Հավելված 7	Տեղեկատվություն ֆինանսական գործիքների և դրանց հետ կապված ռիսկերի մասին
Հավելված 8	Ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ
Հավելված 9, 9Ա	Պայմանագրի ստորագրման վերաբերյալ հաստատում

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

ԴԻՄՈՒՄ
ներդրումային հաշիվ բացելու և Պայմանագրին միանալու

Ամսաթիվը՝ _____

Սույն Դիմումով _____ («Հաճախորդ») դիմում է «Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ի կողմից ներդումային և ոչ հիմնական ծառայություններ ծառայությունների մատուցման պայմանագրին («Պայմանագիր») միանալու և համապատասխան Ներդրումային հաշիվ(ները) բացելու համար՝ Կանոնների և Պայմանագրի համաձայն:

Հաշվի պատկանելիության տեսակը

☐ ՍԵՓԱԿԱՆ ներդրումային հաշիվ
☐ ՀԱՃԱԽՈՐԴԻ ներդրումային հաշիվ (միայն արտոնագրված ֆինանսական հաստատությունների համար)
☐ Ընդհանրացված
☐ Առանձնացված

Հաշվետվության արժույթը

_____

Հաճախորդի տվյալներ

Անձնագիր / Պետական գրանցման համար	
Սոց. ապահովագրության համար / ՀՎՀՀ	
Բնակության / գործունեության հասցեն	
Հեռախոսահամար	
Էլեկտրոնային փոստ	

Պահանջվող ծառայություններ

☐ Բրոքերային ծառայություններ
☐ Արժեթղթերով գործառնությունների իրականցում
☐ Արժույթի գնման/վաճառքի գործարքների իրականացում
☐ Մարժինալ առևտուր / վարկային թև (ներառյալ արտարժութային գործարքները)
☐ Ներդրումային խորհրդատվական ծառայություններ
☐ Ներդրումային փաթեթի կառավարման ծառայություններ
☐ Չերաշխավորված տեղաբաշխում
☐ Արժեթղթերի պահառություն

Հաստատումներ

☐ Հաճախորդը հաստատում է իր իրազեկվածությունը և հասկացողությունը «Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ի կողմից ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման Պայմանագրի (պայմանների և դրույթների), ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման Կանոնների (ներառյալ՝ տեղեկատվություն «Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ի, դրա ծառայությունների և արժեթղթերի վերաբերյալ), ինչպես նաև ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների Սակագների (ներառյալ՝ ծախսեր, վճարներ և միջնորդավճարներ) նկատմամբ:

☐ Հաճախորդը համաձայնում է ստանալ «Պրոֆեսիոնալ հաճախորդ» կարգավիճակ, եթե բավարարում է պրոֆեսիոնալ հաճախորդների համար սահմանված չափանիշներին: Հաճախորդը գիտակցում է, որ պրոֆեսիոնալ հաճախորդի դասակարգման դեպքում հաճախորդների պաշտպանության վերաբերյալ որոշ օրենսդրական պահանջներ իրենց վրա կարող են չտարածվել, ինչի հետևանքով որոշ պաշտպանական մեխանիզմներ կարող են նվազել:

☐ Հաճախորդը համաձայնում է գրանցվել «Որակավորված ներդրողների ռեեստրում», եթե դասակարգվի որպես պրոֆեսիոնալ հաճախորդ:

☐ Հաճախորդը տեղյակ է, որ մարժինալ և վարկային թևով գործարքները, ներառյալ արտարժութային գործարքները, բարձր ռիսկայնությամբ են, և նման գործարքների մեջ մուտք գործելը նպատակահարմար է միայն պրոֆեսիոնալ հաճախորդների համար, որոնք պատրաստ են կորցնել իրենց կողմից սկզբնապես տրամադրված գրավը (մարժան): Հաճախորդը հասկանում է, որ նման գործարքներին բնորոշ են արժեթղթերի գների և փոխարժեքների զգալի տատանումներ, որոնք կարող են հանգեցնել ինչպես բարձր շահույթի, այնպես էլ զգալի վնասների:

_____

Սույն Դիմումը ստորագրելով՝ Հաճախորդը հաստատում է ներկայացված տեղեկատվության ճշգրտությունը և ընդունում է «Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ի Կանոնները, Պայմանագիրը և Սակագները:

Հաճախորդի անունը

Ստորագրողի անունը / պաշտոնը

Ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ 2 – ԾԱՆՈՒՑՄԱՆ ՁԵՎ

Ձև 2.1 – Ծանուցում նախնական հայտի վերաբերյալ

Ամսաթիվը՝ _____

Ում՝ _____ («Հաճախորդ»)

Հարգելի՛ _____,

Հայտնում եմ Ձեզ, որ «Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ի հետ ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման Պայմանագրի կնքման Ձեր __.__.____-ին ներկայացված հայտը ՀԱՍՏԱՏՎԵԼ Է/ՄԵՐԺՎԵԼ Է:

Հաճախորդի Ձեր դասակարգումն է՝ ☐ Պրոֆեսիոնալ ☐ Ոչ պրոֆեսիոնալ

Հաճախորդի Ձեր կոդն է՝ _____

Ձեզ համար բացվել են հետևյալ ներդրումային հաշիվները.

Հաշվի տեսակը	Հաշվի համարը
ՍԵՓԱԿԱՆ ներդրումային հաշիվ	
ՀԱՃԱԽՈՐԴԻ ներդրումային հաշիվ	
Ընդհանրացված	
Առանձնացված	

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն _____

Ստորագրություն _____

Ձև 2.2 – Ծանուցում Պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

Ամսաթիվը՝ _____

Ում՝ _____ («Հաճախորդ»)

Հարգելի՛ _____,

Հայտնում ենք Ձեզ, որ «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի հետ ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման Պայմանագրում փոփոխություններ կատարելու Ձեր __.__.____-ին հայտը ՀԱՍՏԱՏՎԵԼ Է/ՄԵՐԺՎԵԼ Է:

Սույն Ծանուցման օրվանից Դուք իրավասու եք օգտվել Ձեր Դիմումում նշված ծառայությունների թարմացված շրջանակից:

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն _____

Ստորագրություն _____

Ձև 2.3 – Ծանուցում լրացուցիչ հաշվի վերաբերյալ

Ամսաթիվը՝ _____

Ում՝ _____ («Հաճախորդ»)

Հարգելի՛ _____,

Հայտնում ենք Ձեզ, որ «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ում լրացուցիչ ներդրումային հաշվի բացման Ձեր __.__.____-ի հայտը ՀԱՍՏԱՏՎԵԼ Է/ՄԵՐԺՎԵԼ Է:

Ձեզ համար բացվել են հետևյալ հաշիվները.

Հաշվի տեսակը	Հաշվի համարը
ՍԵՓԱԿԱՆ ներդրումային հաշիվ	
ՀԱՃԱԽՈՐԴԻ ներդրումային հաշիվ	
Ընդհանրացված	
Առանձնացված	

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն _____

Ստորագրություն _____

Ձև 2.4 – Ծանուցում ֆունկցիոնալ ենթահաշվի վերաբերյալ

Ամսաթիվը՝ _____

Ում՝ _____ («Հաճախորդ»)

Հարգելի՛ _____,

Հայտնում ենք Ձեզ, որ «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ում առկա ներդրումային հաշվի № _____ ներքո ֆունկցիոնալ ենթահաշվի բացման Ձեր __ / __ / ____-ի հայտը ՀԱՍՏԱՏՎԵԼ Է/ՄԵՐԺՎԵԼ Է:

Ձեր համար ստեղծվել է հետևյալ ենթահաշիվը.

Ենթահաշվի տեսակը / անվանումը	Ենթահաշվի համարը

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն _____

Ստորագրություն _____

Ձև 2.5 – Հաշվի փակման ծանուցագիր

Ամսաթիվը՝ _____

Ում՝ _____ («Հաճախորդ»)

Հաճախորդի կոդ՝ _____

Ներդրումային հաշվի համար՝ _____

Սույնով հաստատվում է, որ վերը նշված Ներդրումային հաշիվ(ներ)ը փակվել է/են «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման կանոնների և Ընկերության ներքին ընթացակարգերի համաձայն:

Հաշվի փակման ուժի մեջ մտնելու օրն է՝ __ / __ / ____:

Սույն ծանուցագրին կցվում է վերջնական հաշվետվություն, որը ներկայացնում է բոլոր մնացորդներն ու գործարքները փակման օրվա դրությամբ:

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն _____

Ստորագրություն _____

ՀԱՎԵԼՎԱԾ 3 – ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ

Ծառայությունների փոփոխման և լրացուցիչ հաշիվ(ներ)ի / ենթահաշիվ(ներ)ի բացման դիմում

Ամսաթիվ՝ _____

Սույնով _____ («Հաճախորդ») դիմում է ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների շրջանակի փոփոխման համար, որոնք _____-ին ընդունվել են «Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ի կողմից Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման դիմումի հիման վրա: Փոփոխությունները կարող են ներառել ծառայությունների ավելացում, դադարեցում կամ հետկանչ, ինչպես նաև լրացուցիչ հաշիվ(ներ)ի կամ ենթահաշիվ(ներ)ի բացում՝ ինչպես ներկայացված է ստորև:

1. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Հաճախորդի անուն	
Հաճախորդի կոդ	
Կապի տվյալներ (էլ. փոստ / հեռախոսահամար)	

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ծառայություն	**Ավելացնել**	**Դադարեցնել**
Բրոքերային ծառայություններ	☐	☐
Արժեթղթերով գործառնությունների իրականացում	☐	☐
Արժույթի գնման/վաճառքի գործարքների իրականացում	☐	☐
Մարժինալ առևտուր / վարկային թև (ներառյալ արտարժութային գործարքները)[1]*	☐	☐
Ներդրումային խորհրդատվական ծառայություններ	☐	☐
Ներդրումային փաթեթի կառավարման ծառայություններ	☐	☐
Չերաշխավորված տեղաբաշխում	☐	☐
Արժեթղթերի պահառություն	☐	☐

**Ռիսկերի բացահայտում (եթե ավելացվում է մարժինալ առևտուր / վարկային թև). Հաճախորդը հաստատում է, որ վարկային թևով (մարժինալ) գործարքներն ունեն բարձր ռիսկայնություն, ներառյալ ներդրված ամբողջ մարժայի (գրավի) կորուստի հավանականությունը: Նման ծառայությունները նպատակահարմար են միայն այն հաճախորդների համար, որոնք ունակ են կրել զգալի ֆինանսական կորուստ:*

[1] Եթե Հաճախորդը դիմում է մարժինալ առևտրի/վարկային թևի մասով ծառայությունների դադարեցման համար, ապա մինչև դադարեցման ուժի մեջ մտնելը պետք է փակվեն բոլոր բաց դիրքերը և կատարվի դրանց հետ կապված պարտավորությունների ամբողջական կատարումը:

3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՇԻՎԻ ԿԱՄ ԵՆԹԱՀԱՇԻՎԻ ԲԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Խնդրում ենք նշել՝ ցանկանում եք բացել լրացուցիչ հաշիվ կամ ֆունկցիոնալ ենթահաշիվ.

3.1 Լրացուցիչ ներդրումային հաշիվ

☐ Դիմում եմ լրացուցիչ ներդրումային հաշիվ բացելու համար:

☐ ՍԵՓԱԿԱՆ ներդրումային հաշիվ

☐ ՀԱՃԱԽՈՐԴԻ ներդրումային հաշիվ

☐ Ընդհանրացված ☐ Առանձնացված

Հաշվետվության արժույթ: _____

Նպատակ / Գործնական հիմնավորում: _____

3.2 Ֆունկցիոնալ ենթահաշիվ (նախատեսված ռազմավարության, հաշվետվականության կամ ներդրումային փաթեթների տարանջատման համար)

☐ Դիմում եմ ֆունկցիոնալ ենթահաշիվ բացելու համար՝ իմ առկա ներդրումային հաշվի շրջանակում:

Առկա ներդրումային հաշվի համար՝ _____

Ենթահաշվի նպատակ / Օգտագործման ուղղություն (օր.՝ փաթեթի կառավարում, ռազմավարություն, հաշվետվություն)՝ _____

Հաշվետվության արժույթ՝ _____

4. ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Դիմումը ստորագրելով՝ Հաճախորդը այսուհետ՝

- Դիմում է, որպեսզի «Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ն փոխի և/կամ լրացնի ծառայությունների և/կամ հաշիվների շրջանակը, ինչպես նշված է վերը:
- Հաստատում է, որ սույն Դիմումը՝ ընդունվելուց հետո «Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ի կողմից, կազմում է Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման դիմումի հիման վրա ձևավորված պայմանագրային հարաբերության անբաժանելի մասը:
- Հաստատում է, որ սույն փոփոխությունը չի փոխում Հաճախորդի և Ընկերության միջև գործող հարաբերություններին վերաբերող որևէ այլ պայման կամ դրույթ:
- Հաստատում է, որ ցանկացած նոր կամ վերականգնվող ծառայություն կտրամադրվի Կանոնների, սույն Դիմումի և կիրառելի իրավական պահանջների համաձայն:
- Գիտակցում է, որ ներդրումային և խորհրդատվական ծառայությունները պարունակում են ռիսկեր, և որ կատարողականությունը կամ արդյունքը երաշխավորված չեն:
- Հաստատում է, որ սույն Դիմումով ներկայացված տեղեկատվությունը ճշգրիտ է և կօգտագործվի Ընկերության կողմից՝ ծառայությունների համապատասխանության և հարմարության գնահատման նպատակով:

5. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒՄ

Հաճախորդի անունը՝ _____

Ստորագրողի անունը՝ _____

Պաշտոնը՝ _____

Ստորագրություն՝ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 3Ա – ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

(Լրացվում և ստորագրվում է միայն այն դեպքում, եթե Հաճախորդը դիմում է Ներդրումային խորհրդատվական կամ Ներդրումային փաթեթների կառավարման ծառայությունների տրամադրման համար)

*Նպատակ: Սույն Հարցաթերթիկը, լրացված և Հաճախորդի կողմից ստորագրված ձևով, համարվում է **«Խորհրդատվական պրոֆիլ»**՝ կիրառելի օրենքի և կարգավորող ակտերի պահանջների համաձայն, իսկ այն դեպքում, երբ դիմումը վերաբերում է Ներդրումային փաթեթների կառավարման ծառայությանը, հանդիսանում է **«Ներդրումային հռչակագիր»**՝ որը ծառայում է դիսկրետ կառավարման հիմք:*

Ամսաթիվ՝ _____

1. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաճախորդի անուն	
Հաճախորդի կոդ	

2. ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ՓՈՐՁ

Արժեթղթերի կամ գործիքի տեսակ	**Փորձ**	**Փորձի տևողություն**	**Գիտելիքի մակարդակ**
Բաժնետոմսեր / Շահաբաժնային արժեթղթեր	☐ Այո ☐ Ոչ	☐ <1 ☐ 1–3 ☐ 3–5 ☐ >5	☐ Սահմանափակ ☐ Միջին ☐ Բարձր
Պարտատոմսեր / Ֆիքսված եկամտաբերություն	☐ Այո ☐ Ոչ	☐ <1 ☐ 1–3 ☐ 3–5 ☐ >5	☐ Սահմանափակ ☐ Միջին ☐ Բարձր
Ներդրումային ֆոնդեր (UCITS, ETF, AIF)	☐ Այո ☐ Ոչ	☐ <1 ☐ 1–3 ☐ 3–5 ☐ >5	☐ Սահմանափակ ☐ Միջին ☐ Բարձր
Կառուցվածքային ապրանքներ	☐ Այո ☐ Ոչ	☐ <1 ☐ 1–3 ☐ 3–5 ☐ >5	☐ Սահմանափակ ☐ Միջին ☐ Բարձր
Ածանցյալ ֆինանսական գործիքներ (օպցիոններ, ֆյուչերսներ, սվոփեր)	☐ Այո ☐ Ոչ	☐ <1 ☐ 1–3 ☐ 3–5 ☐ >5	☐ Սահմանափակ ☐ Միջին ☐ Բարձր
Արտարժույթ / Մարժային գործիքներ	☐ Այո ☐ Ոչ	☐ <1 ☐ 1–3 ☐ 3–5 ☐ >5	☐ Սահմանափակ ☐ Միջին ☐ Բարձր

Մասնավոր կապիտալ / Այլ գործիքներ	☐ Այո ☐ Ոչ	☐ <1 ☐ 1–3 ☐ 3–5 ☐ >5	☐ Սահմանափակ ☐ Միջին ☐ Բարձր

Լրացուցիչ տեղեկատվություն

- Գործարքների մեծ մասը կատարվել է՝
  ☐ Ինքնուրույն ☐ Խորհրդատվությամբ ☐ Վստահելի (դիսկրետ) կառավարմամբ

- Գործարքների բնորոշ հաճախականություն՝
  ☐ Հազվադեպ ☐ Տարեկան 1–5 անգամ ☐ Ամսական ☐ Շաբաթական կամ ավելի հաճախ

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

3.1 Ներդրումային միջոցների աղբյուր.

☐ Աշխատավարձ ☐ Բիզնես եկամուտ ☐ Ժառանգություն ☐ Ներդրումային եկամուտ
☐ Այլ՝ _____

3.2 Նախնական ընդհանուր կարողություն (պարտադիր չի նշել).

☐ <100,000 USD ☐ 100,000–500,000 USD ☐ 500,000–1,000,000 USD ☐ >1,000,000 USD

3.3 Կորուստը կրելու կարողություն.

☐ Ընդունելի է ամբողջական կորուստը
☐ Ընդունելի է մասնակի կորուստը
☐ Ընդունելի է միայն նվազագույն կորուստը

4. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՊԱՐԱՄԵՏՐԵՐ

Ներդրումային նպատակներ.

☐ Կապիտալի պահպանում ☐ Հավասարակշռված աճ ☐ Աճ ☐ Եկամտաբերություն
☐ Այլ՝ _____

Ռիսկի հանդուրժողականություն՝

☐ Պահպանողական ☐ Միջին ☐ Բարձր

Ներդրումային հորիզոն՝

☐ Մինչև 1 տարի ☐ 1–3 տարի ☐ 3–5 տարի ☐ Ավելի քան 5 տարի

Թույլատրելի գործիքներ՝

☐ Բաժնետոմսեր ☐ Պարտատոմսեր ☐ ETF-ներ ☐ Ածանցյալներ ☐ Ֆոնդեր
☐ Այլ՝ _____

Սահմանափակումներ / Բացառություններ՝ _____

Ցուցանիշ / բենչմարկ (պարտադիր չի նշել):_____

5. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Սույն փաստաթուղթը ստորագրելով՝ Հաճախորդը հաստատում է, որ՝

- Ներկայացված տեղեկատվությունը ճշգրիտ և ամբողջական է իր գիտելիքի առավելագույն սահմաններում:
- Սույն Հարցաթերթիկը ամբողջությամբ կօգտագործվի «Լենդմարկ Կապիտալ» ՓԲԸ-ի կողմից՝ ներդրումային ծառայությունների և ֆինանսական գործիքների համապատասխանության և հարմարության գնահատման նպատակով:

- Սույն փաստաթուղթը կազմում է Խորհրդատվական պրոֆիլ, իսկ այն դեպքում, երբ պահանջվում է Ներդրումային փաթեթների կառավարում, հանդիսանում է Ներդրումային հռչակագիր, որի հիման վրա Ընկերությունը կիրականացնի Հաճախորդի փաթեթի կառավարում:

- Հաճախորդը գիտակցում է, որ անավարտ կամ ոչ ճշգրիտ տեղեկատվությունը կարող է ազդել Ընկերության կողմից խորհրդատվական ծառայությունների մատուցման վրա և հանգեցնել որոշ ծառայությունների կամ ապրանքների մերժման:

- Հաճախորդը ընդունում է, որ ներդրումային և խորհրդատվական ծառայությունները պարունակում են ռիսկեր, և որ ոչ մի արդյունք կամ եկամտաբերություն երաշխավորված չէ:

ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաճախորդի անուն՝ _____

Լիազորված ստորագրողի անուն / պաշտոն՝ _____

Ստորագրություն՝ _____

Ամսաթիվ՝ _____

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Ամսաթիվը՝ _____

Սույն լիազորագրով _____ («Հաճախորդ») լիազորում է _____ («Ներկայացուցիչ») գործել իր անունից և իր հաշվին՝ **«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ**-ի հետ իրավահարաբերությունների շրջանակներում՝ ստորև կանխորոշված սահմաններում և պայմաններով:

1. Ներկայացուցչի լիազորությունների ծավալը

Թույլատրված գործողություն	**Ընտրություն**
Բացել ֆունկցիոնալ ենթահաշիվներ՝ գոյություն ունեցող ներդրումային հաշվի (հաշիվների) շրջանակում	☐
Առկա ներդրումային հաշիվների համալրում	☐
Ներդրումային հաշիվներից Ակտիվների դուրսբերում	☐
Իրականացնել գործարքներ (ներկայացնել հանձնարարականներ) հետևյալ գործիքներով՝	☐
ա. Արժեթղթեր (պարտատոմսեր, բաժնետոմսեր, ֆոնդերի փայեր)	☐
բ. Արտարժույթ (արժույթային գործարքներ)	☐
գ. Ածանցյալ ֆինանսական գործիքներ (սվոփներ, օպցիոններ, ֆյուչերսներ, ֆորվարդներ)	☐
դ. Այլընտրանքային և կառուցվածքային գործիքներ	☐
Իրացնել արժեթղթերի և այլ ֆինանսական գործիքների պահառության հետ կապված իրավունքները	☐
Իրացնել իրավունքները և ստորագրել փաստաթղթեր՝ առնչվող ֆինանսական գործիքներից ստացվող եկամուտներին (օր.՝ կուպոններ, շահաբաժիններ, բաշխումներ), այն պայմանով, որ բոլոր նման եկամուտները պետք է մուտքագրվեն բացառապես Հաճախորդի ներդրումային հաշվին	☐
Տալ և ստանալ Ակտիվներ (դրամական միջոցներ և Արժեթղթեր) փոխառության կարգով: Կիրառելի լինելու դեպքում՝ տվյալ դրամական սահմաններում՝ _____	☐
Պահանջել և ստանալ ներդրումային խորհրդատվության ծառայություններ, ներառյալ՝ ներդրումային հոչակագրերի ներկայացումը կամ փոփոխումը	☐
Պահանջել և ստանալ պորտֆելի կառավարման ծառայություններ, ներառյալ՝ ներդրումային հոչակագրերի ներկայացումը կամ փոփոխումը	☐
Ստանալ հաշվետվություններ, վիճակագրական տեղեկանքներ և այլ տեղեկություններ՝ գործարքների և ֆինանսական գործիքների վերաբերյալ	☐
Բացահայտել և տրամադրել Հաճախորդի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (ներառյալ՝ իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվությունը)	☐
Ստորագրել պայմանագրեր, հանձնարարականներ և այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են վերը նշված լիազորությունների կատարման համար	☐

Նշում. Ներկայացուցիչը լիազորված է իրականացնել վերոնշյալ գործողությունները Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին՝ **բացառությամբ նոր Ներդրումային հաշվի բացման իրավունքի**:

2. Վավերականության ժամկետը

Սույն լիազորագիրը վավեր է _____ ժամկետով:

Նշում. Ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ լիազորագրի վավերականության առավելագույն ժամկետը կազմում է երեք (3) տարի:

3. Նույնականացման տվյալներ

Հաճախորդ

Ամբողջական անուն / ընկերության անվանում	
Պետական գրանցման / անձը հաստատող փաստաթղթի №	
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	
Հեռախոսահամար	
Էլեկտրոնային փոստ	
Լիազորված ներկայացուցիչ (եթե այդպիսին առկա է)	

Ներկայացուցիչ

Ամբողջական անուն / ընկերության անվանում	
Պետական գրանցման / անձը հաստատող փաստաթղթի №	
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	
Հեռախոսահամար	
Էլեկտրոնային փոստ	
Լիազորված ներկայացուցիչ (եթե այդպիսին առկա է)	

4. Ստորագրություններ

Կողմ	**Անուն**	**Ստորագրություն**	**Ամսաթիվ**
Հաճախորդ			
Ներկայացուցիչ			

ՀԱՎԵԼՎԱԾ 5 – ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀՈՒՍԱԼԻ ՄԻՋՈՑՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀՈՒՍԱԼԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Հաճախորդ՝ _____

1. Լիազորված ստորագրողներ

Հետևյալ անձինք լիազորված են ներկայացնելու Հաճախորդին և ստորագրելու փաստաթղթեր (ֆիզիկապես կամ էլեկտրոնային եղանակով)՝ առնչվող «Լենդմարք Կապիտալ» ՓԲԸ-ի հետ Հաճախորդի հարաբերություններին:

Անուն, Ազգանուն	Պաշտոն / Տիտղոս	Անձնագրի / ID համարը	Ստորագրության նմուշ

Վերոնշյալ լիազորված ստորագրողներից որևէ մեկի ստորագրությամբ ստացված հրահանգները, պատվերները, պայմանագրերը կամ այլ իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթերը կհամարվեն վավեր և պարտադիր Հաճախորդի համար:

2. Հաստատված հաղորդակցության ուղիներ

Ընկերության միջոցներ	**Հաճախորդի միջոցներ**
2.1 Ստորագրված փաստաթղթեր (պայմանագրեր, հանձնարարականներ, հաստատումներ, ձևեր) կարող են ներկայացվել հետևյալ տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով՝	
Bloomberg Chat: <Landmark Desk>	Bloomberg Chat:
Էլ. Փոստ՝ relations@landmarkcapital.am setts@landmarkcapital.am {RMname}@landmarkcapital.am onboarding@landmarkcapital.am info@landmarkcapital.am accounting@landmarkcapital.am	Էլ. Փոստ՝
Սուրհանդակային / անձամբ առաքում: 0010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող. 10, տարածք 118	Սուրհանդակային / անձամբ առաքում:
2.2 Առևտրային գործարքների և հաստատումների հետ կապված չստորագրված փաստաթղթեր (հանձնարարականներ, պատվերներ, գնման/վաճառքի համաձայնագրեր, առևտրային հաստատումներ, բաշխման հրահանգներ, հաշվետվություններ և քաղվածքներ) կարող են ներկայացվել հետևյալ	

տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով՝	
Bloomberg Chat: <Landmark Desk>	Bloomberg Chat:
Էլ. Փոստ՝ relations@landmarkcapital.am setts@landmarkcapital.am	Էլ. Փոստ՝

2.3 Կապ և քննարկումներ (Ոչ պարտավորեցնող)	
Անմիջական հաղորդագրություններ (WhatsApp / Telegram)	Անմիջական հաղորդագրություններ (WhatsApp / Telegram)

3. Փոփոխությունների ծանուցում

Երկու Կողմերն էլ պարտավորվում են միմյանց գրավոր ծանուցել իրենց լիազորված անձանց կամ հաղորդակցության տվյալների ցանկացած փոփոխության մասին՝ հնարավորինս շուտ: Մինչ այդպիսի ծանուցման ստացումն ու հաստատումը, Կողմերը կարող են հենվել նախապես տրամադրված վերջին վավեր տեղեկատվության վրա:

4. Ստորագրություններ

Կողմ	Անուն	Պաշտոն	Ստորագրություն / Կնիք	Ամսաթիվ
Ընկերություն				
Հաճախորդ				

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերություն

Կենտրոնական բանկի կողմից 2019 թվականի մարտի 29-ին տրված ներդրումային ծառայությունների տրամադրման լիցենզիա թիվ 0016

ՀՎՀՀ՝ 02695279

Գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն.

0010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող. 10, տարածք 118

Պաշտոնական կայքը՝ www.landmarkcapital.am*

Էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեն՝ info@landmarkcapital.am

Հեռախոսահամար՝ +374 60 277274

Կապի և տեղեկատվության փոխանակման լեզուները՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն

** www.landmarkcapital.am-ը «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության միակ պաշտոնական կայքն է: www.landmarkcapital.am-ին նման անվանումներով և/կամ բովանդակությամբ ցանկացած այլ վեբ էջեր որևէ առնչություն չունեն «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի հետ, ընդ որում «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ն պատասխանատվություն չի կրում նման աղբուրների բովանդակության, ինչպես նաև դրանց օգտագործման արդյունքում պատճառված վնասների ու կորուստների համար:*

ՀԱՎԵԼՎԱԾ 7 – ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաճախորդը կրում է ֆինանսական շուկաներում իրականացվող գործարքներից բխող ռիսկերը: Ընկերությունը չի փոխհատուցում և չի վերադարձնում Հաճախորդի կրած վնասները կամ կորուստները, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք առաջացել են Ընկերության անբարեխիղճ կամ ակնհայտ անօրինական վարքագծի արդյունքում:

1. Ռիսկերի հիմնական տեսակները

Ներդրումային գործունեությունը և որոշ ֆինանսական գործիքներ բնութագրվում են հետևյալ ռիսկերի տեսակներով (խնդրում ենք նկատի ունենալ, որ ստորև ներկայացված ռիսկերի ցանկը ամբողջական չէ և սպառիչ չի համարվում)՝

Գների տատանումների ռիսկ	Ֆինանսական գործիքների գների աճի կամ անկման ռիսկ՝ պայմանավորված տարբեր արտաքին գործոններով: Քանի որ այդ գործոնները դուրս են Ընկերության վերահսկողությունից, Հաճախորդի ներդրումային փաթեթի արժեքը կարող է զգալիորեն նվազել գների տատանումների հետևանքով:
Լիկվիդայնության ռիսկ	Ռիսկ, որը ծագում է, երբ շուկայի մասնակիցները կորցնում են հետաքրքրությունը տվյալ գործիքի նկատմամբ: Այսպիսի հետաքրքրության կորուստը կարող է պայմանավորված լինել թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով, կորպորատիվ իրադարձություններով, շուկայի ընդհանուր իրավիճակով կամ կարգավորող մարմինների պահանջներով: Արդյունքում կարող է նվազել գործիքի գինը և Հաճախորդի ընդհանուր փաթեթի արժեքը:
Թողարկողի անպատվաճարունակության ռիսկ	Ռիսկ, ըստ որի թողարկողը կարող է չկարողանալ մարել իր պարտավորությունները ներդրողների հանդեպ, ինչի հետևանքով ներդրողը կարող է կորցնել իր ներդրած միջոցները՝ ամբողջությամբ կամ մասամբ:
Արժույթի (արտարժույթի) ռիսկ	Ռիսկ, որը պայմանավորված է փոխարժեքների տատանումներով այն դեպքում, երբ ներդրումն իրականացվում է այլ արժույթով, քան Հաճախորդի հիմնական արժույթն է:
Իրավական, կարգավորող և հարկային ռիսկ	Ռիսկ, որը կապված է օրենքների, կարգավորումների կամ հարկային ռեժիմների փոփոխությունների հետ, կամ այն հանգամանքի, որ տարբեր իրավասություններում իրավական մեկնաբանությունները կարող են տարբերվել և բացասաբար ազդել ներդրումների վրա կամ սահմանափակել Ընկերության հնարավորությունը՝ գործելու Հաճախորդի անունից:
Սոցիալական և քաղաքական ռիսկ	Ռիսկ՝ առաջացած սոցիալ-քաղաքական անկարգությունների, հեղաշրջումների, զանգվածային անհանգստությունների կամ այլ իրադարձությունների հետևանքով տվյալ երկրում կամ տարածաշրջանում, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ ներդրողների վրա:
Կեղծիքների և խարդախությունների ռիսկ	Ռիսկ, որի դեպքում ներդրողները կարող են կրել վնասներ թողարկման, տեղաբաշխման կամ վաճառքի ընթացքում տեղի

	ունեցած խարդախությունների, տեղեկատվության թաքցման կամ այլ հանցավոր գործողությունների արդյունքում:
Հակակողմերի և առևտրային հարթակների ռիսկ	Ռիսկ, որը կապված է այն հակակողմերի, ենթաբրոքերների, լիկվիդայնության մատակարարների կամ առևտրային հարթակների գործողությունների, անգործության, տեխնիկական ձախողման կամ անպատվաճարունակության հետևանքով առաջացած կորուստների հետ: Նման գործարքները ենթարկվում են այդ կառույցների սեփական կանոններին, մարժայի պահանջներին, տեխնիկական ստանդարտներին և հաշվարկային ընթացակարգերին, որոնք կարող են տարբերվել Ընկերության կիրառածներից: Այդ համակարգերում առաջացած խափանումները կամ սխալները կարող են հանգեցնել Հաճախորդի Ակտիվների մասնակի կամ ամբողջական կորստի կամ գործարքների կատարման ձախողման: Հակակողմի կամ հարթակի անպատվաճարունակության կամ գործունեության կասեցման դեպքում Հաճախորդը կարող է բախվել իր Ակտիվների վերադարձի ուշացման կամ անհնարինության հետ:
Պահառության և դեպոզիտարի ռիսկ	Ռիսկ, որը կապված է պահառուների, ենթապահառուների կամ դեպոզիտարիաների անգործության, անփութության կամ անպատվաճարունակության հետևանքով Ակտիվների կորստի կամ ուշացած վերադարձի հետ: Հաճախորդի Ակտիվները կարող են պահվել ինչպես Հաճախորդի անունով, այնպես էլ Ընկերության անունով բացված համախառն կամ առանձնացված հաշիվներում: Ընկերության անունով պահվող Ակտիվները կարող են ենթարկվել երրորդ անձանց պահանջների կամ սահմանափակ իրավական տարանջատման ռիսկին: Ընկերությունը կարող է ժամանակավորապես օգտագործել, գրավադրել կամ տեղաբաշխել այդ Ակտիվները՝ լիովին պատասխանատվություն կրելով դրանց անվտանգության և ժամանակին վերադարձի համար՝ համաձայն Կանոնների 8.3 կետի:
Հաշվարկների ռիսկ	Ռիսկ, ըստ որի գործարքի կողմերից մեկը չի կատարում իր պարտավորությունը՝ պայմանավորված Ակտիվների մատակարարումը, ինչը կարող է հանգեցնել ֆինանսական վնասների կամ գործարքի կատարման ուշացման:
Գործառնական և կիբերանվտանգության ռիսկ	Ռիսկ, որը բխում է տեղեկատվական, էլեկտրոնային կամ հաղորդակցական համակարգերի խափանումներից, տեխնոլոգիական կամ կառավարման գործընթացների անբավարարությունից: Ներառում է նաև մարդկային սխալների, հրդեհների, տեխնիկական վթարների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի կիբերհարձակումների (օր.՝ չարտոնված մուտք, տվյալների արտահոսք, ծառայության մերժման հարձակումներ և այլն) հետևանքով առաջացած կորուստները, որոնք կարող են խաթարել Ընկերության կամ նրա հակակողմերի, պահառուների և առևտրային հարթակների գործունեությունը:
Ֆորս մաժոր և արտակարգ իրադարձությունների ռիսկ	Ռիսկ՝ կապված այն իրադարձությունների հետ, որոնք դուրս են մարդու վերահսկողությունից (բնական աղետներ, պատերազմներ, ահաբեկչություն, համավարակներ, համակարգային խափանումներ և այլն): Նման դեպքերը կարող են խաթարել ֆինանսական շուկաների գործունեությունը, ուշացնել հաշվարկները կամ սահմանափակել մուտքը Ակտիվներին:

	Ընկերությունը նման դեպքերում պատասխանատվություն չի կրում, եթե գործել է բարեխղճորեն և օրենքին համապատասխան:
Մարժայի ռիսկ	Ռիսկ, որի դեպքում Հաճախորդը կարող է կրել վնասներ կամ պարտավորվել լրացուցիչ միջոցներ մուտքագրել, եթե իր դիրքերի արժեքը նվազում է պահանջվող մարժայից ցածր: Մարժայի պահանջների չկատարումը կարող է հանգեցնել դիրքերի հարկադիր փակման և կորուստների, որոնք գերազանցում են նախնական մարժան:
Լևերիջի (վարկային թևի) ռիսկ	Ռիսկ, որի դեպքում վարկային կամ մարժային միջոցների օգտագործումը բազմապատկում է ինչպես հնարավոր շահույթը, այնպես էլ կորուստները: Շուկայի փոքր շարժերը կարող են առաջացնել մեծ կորուստներ՝ հատկապես բարձր տատանողականության պայմաններում:
Բացասական մնացորդի ռիսկ	Ռիսկ, որի դեպքում Հաճախորդի հաշվի մնացորդը կարող է դառնալ բացասական՝ առաջացնելով պարտավորություն Ընկերության հանդեպ: Դա կարող է տեղի ունենալ շուկայի արագ շարժումների կամ գործարքների կատարման ուշացումների հետևանքով, երբ կորուստները գերազանցում են հասանելի միջոցները մինչ դիրքերի փակումը:

2. Ֆինանսական գործիքների նկարագրությունը և դրանց հատուկ ռիսկերը

Գործիք	**Նկարագրություն**	**Ռիսկ**
Պարտատոմս	Պարտավորագրային արժեթուղթ, որը հավաստում է թողարկողի պարտավորությունը՝ վերադարձնելու ներդրողին պարտատոմսի հիմնական գումարը (անվանական արժեքը), ինչպես նաև վճարելու թողարկման պայմաններով նախատեսված տոկոսները (կուպոնները): Այլ կերպ ասած՝ պարտատոմս թողարկելով՝ ընկերությունը կամ պետությունը փաստացի վարկ է վերցնում ներդրողից: Ըստ մարման ժամկետի պարտատոմսերը բաժանվում են հետևյալ խմբերի՝ 1. Կարճաժամկետ՝ մարման ժամկետը մեկ տարուց պակաս է, 2. Միջին ժամկետի՝ մարման ժամկետը մեկից հինգ տարի է, 3. Երկարաժամկետ՝ մարման ժամկետը հինգ տարուց ավելի է: Սովորաբար պարտատոմսի շուկայական արժեքը արտահայտվում է անվանական արժեքի տոկոսով: Եթե այն գերազանցում է 100 %-ը, ապա շուկայական արժեքը բարձր է անվանական արժեքից, իսկ եթե պակաս է 100 %-ից, ապա շուկայական արժեքը ցածր է անվանական արժեքից:	Պարտատոմսը ավանդաբար համարվում է ամենաանվտանգ և հուսալի ներդրումային գործիքը: Այնուամենայնիվ, պարտատոմսերում ներդրումները նույնպես ռիսկից զերծ չեն: Նման ներդրումների համար բնորոշ հիմնական ռիսկերը գների տատանման և թողարկողի անպատվաճարունակության ռիսկերն են:

	Ըստ թողարկողի տեսակի՝ պարտատոմսերը դասակարգվում են հետևյալ կերպ՝ 1. Պետական պարտատոմսեր, որոնք թողարկվում են Հայաստանի Հանրապետության (Ֆինանսների նախարարության անունից) կամ այլ պետության կողմից, 2. Համայնքային պարտատոմսեր, որոնք թողարկվում են համայնքների (տեղական ինքնակառավարման մարմինների անունից), 3. Կորպորատիվ պարտատոմսեր, որոնք թողարկվում են մասնավոր կազմակերպությունների կողմից:	
Բաժնետոմս	Բաժնային արժեթուղթ, որը հավաստում է ներդրողի իրավունքներն ու իրավասությունները՝ մասնակցելու թողարկողի կառավարմանը, ստանալու դիվիդենտներ վերջինիս եկամուտներից և շահույթից, ինչպես նաև ստանալու իր բաժնին համապատասխան մաս թողարկողի մնացորդային գույքից՝ լուծարման դեպքում:	Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը անմիջական ազդեցություն ունի բաժնետերերի եկամուտների և ներդրումների վրա: Մասնավորապես՝ ընկերության սնանկացումը կամ լուծարումը հանգեցնում է ներդրված ամբողջ գումարի կորստի: Ինչ վերաբերում է դիվիդենտներին՝ դրանց վճարումն իրականացվում է թողարկողի հայեցողությամբ, ուստի չի բացառվում, որ դիվիդենտներ չվճարվեն երկար ժամանակահատվածների ընթացքում:
Օպցիոն	Պայմանագիր, որի համաձայն մեկ կողմը (օպցիոնի գնորդը) ձեռք է բերում իրավունքը՝ վաճառելու (գնելու) որոշակի հիմքում ընկած Ակտիվ (Արժույթ, Արժեթուղթ կամ այլ ակտիվ) պայմանագրով սահմանված ժամկետում և գնով, իսկ մյուս կողմը (օպցիոնի վաճառողը) պարտավորվում է գնել (վաճառել) այդ Ակտիվը (Արժույթը, Արժեթուղթը կամ այլ ակտիվը): Օպցիոնները՝ արժութային, արժեթղթերով կամ այլ ակտիվներով օպցիոնները, տարբերակվում են՝ ելնելով հիմքում ընկած Ակտիվի տեսակից: Օպցիոնը, որը տալիս է վաճառելու իրավունք, կոչվում է փութ օպցիոն (put option), իսկ գնելու իրավունքը տվող օպցիոնը՝ քոլ օպցիոն (call option):	Որպես ածանցյալ ֆինանսական գործիքներ՝ որոնց արժեքը կախված է հիմքում ընկած ակտիվի գներից, օպցիոնները համարվում են բարձր ռիսկային ներդրումային գործիքներ, քանի որ շուկայի կամ առանձին գործիքի զարգացումը դժվար է կանխատեսել առանց բավարար ներդրումային գիտելիքների և փորձի, հատկապես երկարաժամկետ հեռանկարում:
Սվոփ	Արժութային սվոփը պայմանագիր է, որով կողմերը կարող են փոխանակել (գնել/վաճառել) երկու արժույթ պայմանագրով սահմանված փոխարժեքով (spot rate)՝ հետագայում նույն արժույթները հակադարձ փոխանակելու (վաճառելու/գնելու) պայմանով՝ պայմանագրով նախապես որոշված փոխարժեքով (forward rate), ինչպես նաև փոխանակել պայմանագրով սահմանված տոկոսի գումարները: Այս տեսակի սվոփում հնարավոր է փոխանակել ֆիքսված և	Որպես բարդ ֆինանսական գործիք՝ սվոփը ներառում է բոլոր այն ռիսկերը, որոնք բնորոշ են ածանցյալ ֆինանսական գործիքներին:

	փոփոխական տոկոսադրույքներով տոկոսային վճարումները, ինչպես նաև երկու տարբեր փոփոխական տոկոսադրույքներ: Փոխարժեքային սվոփը արժութային սվոփի պարզ տեսակ է, որը հնարավորություն է տալիս փոխանակել (գնել/վաճառել) երկու արժույթ պայմանագրով սահմանված փոխարժեքով (spot rate)՝ պայմանով, որ տվյալ արժույթները հետագայում կվաճառվեն (կգնվեն) պայմանագրով սահմանված ժամկետում և փոխարժեքով (forward rate): Տոկոսադրույքային սվոփը պայմանագիր է, որի միջոցով կողմերը փոխանակում են կանխիկ հոսքերը՝ տոկոսային վճարումների ձևով: Տոկոսադրույքային սվոփի դեպքում հիմնական գումարները չեն փոխանակվում, փոխանակվում են միայն այդ գումարների վրա հաշվարկված տոկոսային վճարումները: Այս տեսակի սվոփում հնարավոր է փոխանակել ֆիքսված տոկոսադրույքով հաշվարկված վճարումները փոփոխական տոկոսադրույքով վճարումների հետ, ինչպես նաև փոխանակել տարբեր փոփոխական տոկոսադրույքներով վճարումներ:	
Ֆորվարդ	Ֆորվարդը պայմանագիր է, որը կնքվում է չկարգավորվող շուկայում (off-exchange / OTC)՝ որոշակի Ակտիվի (Արժույթ, Արժեթուղթ կամ այլ ակտիվ) ապագա գնման կամ վաճառքի վերաբերյալ՝ նախապես սահմանված գնով և ոչ ստանդարտ հիմունքներով: Այս դեպքում կողմերը պարտավորվում են կատարել գործարքի վերջնական հաշվարկը պայմանագրով սահմանված ժամկետում: Կախված հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ ֆորվարդը կարող է լինել արժութային ֆորվարդ, արժեթղթերի ֆորվարդ կամ այլ ակտիվների ֆորվարդ:	Քանի որ ֆորվարդ պայմանագրով կանխիկ հոսքերը չեն առաջանում անմիջապես (այսինքն՝ պայմանագրով սահմանված է, որ դրանք կկատարվեն ապագայում), հիմնական ռիսկը կապված է հակակողմի վճարունակության բացակայության, սնանկացման կամ պարտավորությունների չկատարման հետ:
Ֆյուչերս	Ֆյուչերսը պայմանագիր է, որը կնքվում է կարգավորվող շուկայում՝ որոշակի ակտիվի (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ) ապագա գնման կամ վաճառքի վերաբերյալ՝ նախապես սահմանված գնով և ստանդարտ պայմաններով: Այս դեպքում կողմերը պարտավորվում են իրականացնել գործարքի վերջնական հաշվարկը պայմանագրով նախատեսված ժամկետում: Կախված հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ ֆյուչերսը կարող է լինել արժութային ֆյուչերս, արժեթղթերի ֆյուչերս կամ այլ ակտիվների ֆյուչերս:	Քանի որ ֆյուչերս պայմանագրով կանխիկ հոսքերը չեն առաջանում անմիջապես (այսինքն՝ դրանք նախատեսվում են ապագայում), հիմնական ռիսկը նույնպես կապված է հակակողմի վճարունակության բացակայության, սնանկացման կամ պարտավորությունների չկատարման հետ:

3. Ծառայությունների հետ կապված այլ ռիսկեր

Ներդրումային գործունեությանը բնորոշ են նաև այլ ռիսկեր, որոնց մասին հաճախորդը պետք է տեղեկացված լինի.

1. Ցանկացած ներդրումային գործունեություն ենթադրում և ներառում է ռիսկային տարրեր:

2. Ներդրումների կանխատեսվող եկամտաբերությունը հակադարձ համեմատական է ռիսկի աստիճանին: Ռիսկը, որը հանդես է գալիս որպես եկամուտ ստանալու միջոց, միաժամանակ պարունակում է նաև հնարավոր վնասների հավանականություն:

3. Ներդրումային գործունեություն սկսելու և իրականացնելու ժամանակ չափազանց կարևոր է ուսումնասիրել ձեռնարկվող ռիսկի քանակական և որակական բնութագրերը:

4. Ամենաանվտանգ և հուսալի գործիքներն են ֆիքսված եկամտաբերությամբ գործիքները, օրինակ՝ բանկային ավանդները, պարտատոմսերը, լիարժեք ապահովված գործիքները և այլ միջոցներ, որոնք ապահովում են նախապես հայտնի եկամտաբերություն որոշակի ժամկետում: Այնուամենայնիվ, նույնիսկ նշված գործիքները ռիսկից ազատ չեն. պարզապես դրանց ռիսկայնությունը համեմատաբար ցածր է (հետևաբար՝ դրանց եկամտաբերությունը նույնպես ցածր է):

5. Նախորդ կետում նշված գործիքներից ամենաբարձր ռիսկայնությամբ են բաժնետոմսերը և այն գործիքները, որոնք ունեն մասնակի կամ պայմանական ապահովվածություն: Ֆիքսված եկամտաբերության բացակայության պատճառով ռիսկի աստիճանը բարձրանում է (մինչև եկամտաբերությունը նույնպես աճում է): Ներդրողի գործողությունների դերը էապես մեծանում է. ի տարբերություն պարտատոմսերի, բաժնետոմսերից ստացվող եկամուտներն ու վնասները զգալիորեն կախված են ներդրողի ճիշտ և ժամանակին գնման/վաճառքի որոշումներից:

6. Արտաքին առևտրային հարթակների կամ հակակողմերի միջոցով իրականացվող ծառայություններից օգտվելիս, հաճախորդը համարվում է կարդացած, հասկացած և ընդունած տվյալ համակարգերին վերաբերվող գործառնական կանոնները, տեխնիկական չափորոշիչներն ու պայմանները: Ընկերության Ներդրումային և ոչ հիմնական ծառայություններից օգտվելը ենթադրում է հաճախորդի համաձայնությունը և գիտակցումը տվյալ հարթակների հետ կապված գործառնական, տեխնոլոգիական և հակակողմերի ռիսկերի վերաբերյալ՝ ինչպես նշված է սույն հավելվածում և Ընկերության Կանոններում:

ՀԱՎԵԼՎԱԾ 8 – ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Հաճախորդները կարող են ներկայացնել բողոքներ Ընկերության և նրա աշխատակիցների գործողությունների կամ անգործության վերաբերյալ՝ աշխատանքային ժամերին: Հաճախորդների կողմից ներկայացված բողոքների քննության, ինչպես նաև հնարավոր վեճերի կարգավորման գործընթացը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև «Հաճախորդների բողոքների և պահանջների քննության կարգ» ներքին ընթացակարգով: Հաճախորդի պահանջով նշված ընթացակարգը կարող է տրամադրվել նրան:

Հաճախորդը կարող է բողոքներ, որոնք ծագում են Ընկերության և Հաճախորդի միջև կնքված գործարքներից, ներկայացնել Ֆինանսական համակարգի միջնորդին, եթե բողոքի ներկայացումից հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը չի ներկայացրել գրավոր պատասխան կամ եթե Հաճախորդը չի բավարարվել Ընկերության կողմից տրված գրավոր պատասխանով:

Ցանկացած ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ ունի իր իրավունքների դատական պաշտպանության իրավունք:

Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի ստանալու այն տեղեկատվությունը, որը սահմանված է Հայաստանի Հանրապետության «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով: Տեղեկատվությունը տրամադրվում է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց որևէ վճարի, եթե այն տրամադրվում է անձամբ կամ էլեկտրոնային փոստով: Եթե տեղեկատվությունը տրամադրվում է ֆաքսով կամ փոստային առաքմամբ, ապա կարող են գանձվել Ընկերության կողմից կրած առաքման հետ կապված ծախսերը:

ՀԱՎԵԼՎԱԾ 9 – ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-Ի ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ
LMC-MAA-ddmmyy-XXX

Ամսաթիվ՝ _____

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերությունը (ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա թիվ 0016, ՀՎՀՀ՝ 02695279, հասցե՝ 0010, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վազգեն Սարգսյան փողոց 10, տարածք 118) (այսուհետ՝ «Ընկերություն»), ի դեմս Գլխավոր տնօրեն _____, որը գործում է Կանոնադրության հիման վրա, և _____, հասցեն՝ _____) (այսուհետ՝ «Հաճախորդ»), մյուս կողմից, համատեղ անվանվելով «Կողմեր» և առանձին-առանձին՝ «Կողմ», պայմանավորվեցին հետևյալի մասին.

1. Առարկան

1.1. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և այլ նորմատիվ-իրավական ակտերով, Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման կանոններով (այսուհետ՝ «Կանոններ») սահմանված կարգին համապատասխան կնքում են Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների (այսուհետ՝ «Ծառայություններ») տրամադրման պայմանագիր (այսուհետ՝ «Պայմանագիր»):

1.2. Կողմերն ընդունում են Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների տրամադրման Պայմանագրի պայմանները:

1.3. Ծառայությունների ծավալը սահմանվում է Հաճախորդի կողմից ներկայացված և Ընկերության կողմից ընդունված Ընկերության կողմից ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների տրամադրման պայմանագրին միանալու դիմումի (այսուհետ՝ «Դիմում»), ինչպես նաև դրան կից բոլոր փոփոխությունների մեջ, որոնք կցվում են սույն Պայմանագրին՝ որպես իր անքակտելի մաս:

2. Կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը

2.1 Կողմերի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը սահմանվում են Պայմանագրով և Կանոններով:

2.2 Բացի Պայմանագրով և Կանոններով սահմանված իրավունքներից, պարտականություններից և պատասխանատվությունից, Կողմերն ունեն նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև կրում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը:

3. Վճարման պայմաններ

3.1 Ծառայությունների դիմաց վճարումը սահմանվում է Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման սակագներով, իսկ հաշվարկման և վճարման կարգը՝ Պայմանագրով:

4. Անցումային դրույթ

4.1 Սույն փաստաթուղթը կազմվել է հայերեն լեզվով՝ երկու (2) օրինակով, որոնք ունեն հավասար իրավական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն փաստաթղթին կցված՝ կողմերի կողմից երկկողմ ստորագրված Հավելված 5-ը ներկայացնում է Ընկերության և Հաճախորդի տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցները, ինչպես նաև լիազորված անձանց տվյալները: Հուսալի տեղեկատվական միջոցների և/կամ լիազորված անձանց փոփոխության դեպքում Կողմերը կազմում և ստորագրում են նոր հավելված:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

0010, Հայաստան, Երևան,
Վազգեն Սարգսյան փող. 10, տարածք 118
ՀՎՀՀ՝ 02695279

Գործադիր տնօրեն

ՀԱՃԱԽՈՐԴ

ՀԱՎԵԼՎԱԾ 9Ա – ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-Ի ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

LMC-MAA-ddmmyy-XXX

Ամսաթիվ՝ _____

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերությունը (ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա թիվ 0016, ՀՎՀՀ՝ 02695279, հասցե՝ 0010, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վազգեն Սարգսյան փողոց 10, տարածք 118) (այսուհետ՝ «Ընկերություն»), ի դեմս Գլխավոր տնօրեն _____, որը գործում է Կանոնադրության հիման վրա, և _____, հասցեն՝ _____) (այսուհետ՝ «Հաճախորդ»), մյուս կողմից, համատեղ անվանվելով «Կողմեր» և առանձին-առանձին՝ «Կողմ», պայմանավորվեցին հետևյալի մասին.

1. Առարկան

1.1. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և այլ նորմատիվ-իրավական ակտերով, Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման կանոններով (այսուհետ՝ «Կանոններ») սահմանված կարգին համապատասխան կնքում են Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների (այսուհետ՝ «Ծառայություններ») տրամադրման պայմանագիր (այսուհետ՝ «Պայմանագիր»):

1.2. Կողմերն ընդունում են Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների տրամադրման Պայմանագրի պայմանները:

1.3. Ծառայությունների ծավալը սահմանվում է Հաճախորդի կողմից ներկայացված և Ընկերության կողմից ընդունված Ընկերության կողմից ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների տրամադրման պայմանագրին միանալու դիմումը (այսուհետ՝ «Դիմում»), ինչպես նաև դրան կից բոլոր փոփոխությունների մեջ, որոնք կցվում են սույն Պայմանագրին՝ որպես իր անքակտելի մաս:

2. Կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը

2.1. Կողմերի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը սահմանվում են Պայմանագրով և Կանոններով:

2.2. Բացի Պայմանագրով և Կանոններով սահմանված իրավունքներից, պարտականություններից և պատասխանատվությունից, Կողմերն ունեն նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև կրում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը:

2.3 Ըստ Կանոնների 8.3 կետի՝ Հաճախորդը սույնով հաստատում է, որ չի լիազորում Ընկերությանը տիրապետել և օգտագործել Հաճախորդի Ակտիվները այն նպատակներով, որոնք չեն առնչվում Հաճախորդի սեփական գործարքների հաշվարկման և պահառության գործընթացներին: Ընկերության կողմից Հաճախորդի անունից պահվող բոլոր դրամական միջոցներն ամբողջությամբ ենթակա են առանձացման և չեն կարող օգտագործվել Ընկերության սեփական նպատակներով: Սույն ցուցման ցանկացած փոփոխություն կարող է իրականացվել միայն Հաճախորդի գրավոր ծանուցմամբ և Ընկերության կողմից այդ փոփոխության գրավոր հաստատմամբ:

3. Վճարման պայմաններ

3.1. Ծառայությունների դիմաց վճարումը սահմանվում է Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման սակագներով, իսկ հաշվարկման և վճարման կարգը՝ Պայմանագրով:

4. Անցումային դրույթ

4.1. Սույն փաստաթուղթը կազմվել է հայերեն լեզվով՝ երկու (2) օրինակով, որոնք ունեն հավասար իրավական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

4.2. Սույն փաստաթղթին կցված՝ կողմերի կողմից երկկողմ ստորագրված Հավելված 5-ը ներկայացնում է Ընկերության և Հաճախորդի տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցները, ինչպես նաև լիազորված անձանց տվյալները: Հուսալի տեղեկատվական միջոցների և/կամ լիազորված անձանց փոփոխության դեպքում Կողմերը կազմում և ստորագրում են նոր հավելված:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ **ՀԱՃԱԽՈՐԴ**

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

0010, Հայաստան, Երևան,
Վազգեն Սարգսյան փող. 10, տարածք 118
ՀՎՀՀ՝ 02695279

Գործադիր տնօրեն